



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Քրիստոսի յարութեան ազատարանները

Գ. Գ. Խ.

Հոգ. կեանք

Սուրբ Հոգիին օրհնութեան աճումը

Յիսուս ամբաստանուած

Եւ եւ

Աստուծոյ տանող ճամբան

Ազատ թարգ. Ն. Մ.

Թարգ. Ի. Յ. Աբրահամեան

Ստմուէլ Պ.

Թարգ. Վեր. Յ. Եղիազարեան

Իրականէն գործնականը

Երեք ամենէն կարեւոր բաները

Ծածկուած «Անով»

Ս. Գրական ուսումնասիրութիւն

Աստուածաշունչը

Կենսագրական

Կամ Յիւզէնտորֆ

Զ. Բ. Պուտաբեան

X X X

Մանկանց սիւնակ

Մառիի բարեկամները

«Մանկանց ու կաթնկեր աղայոց բերնէն»

Պատմական

Եւ աղօթք ընել չեմ գիտեր

Պատկերներ Բարեկամուհիին

Մանուկներու բարեկամ մը

Ջանազան լուրեր

100% Satisfaction Guarantee

Թուրքերենը ունի 8 էջ ո՛ր՝ թե՛ հայերենին Թարգմանաթիւնը այլ տարրեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիւրումիւն կուտայ որ թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխան.
Նատու. խմբագիրն է՝

սրտ, զրկուելու, ե՛ն նաեւ, բոլոր թուրքերէն յօգուածները :


17811302840000000000

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Ի —

MARSEILLE (France)

ԲԱՆԲԵՐ

Արմենի'ր գուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելն
ըն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14



Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր Բանգիտար մանկու խոստումնքէն որ մեզի մ'նացեր է,
մեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ առ-
կէ քիչ մը առնեն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

Թ. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1933

ԹԻԻ 5

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՔՐԻԱՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՑՈՅՑՆԵՐԸ

Բայց հիմա Քրիստոս մեռելներէն յարութիւն
առած է: Ա. Կոր. ԺԵ. 20

«Բանբեր»ի նախորդ թուոյն մէջ գրեցինք
մեր փառաւորեալ Փրկչին յարութեան երկու ա-
պացոյցներուն վրայով, որոնք են. — Առաջին՝
աշակերտներու հաւատքը Յիսուսի յարութեան
իրականութեան նկատմամբ եւ երկրորդ՝ Յիսու-
սի պարապ գերեզմանը: Խմբագրականի համար
տրամադրուած սինակները չթույլատրեցին յի-
շելու նաեւ հետեւեալ ապացոյցները. —

3 եկեղեցիին գոյութիւնը: Միայն յարութեան
իրականութիւնն էր որ եկեղեցիին ծնաւ: Եթէ Քր-
իստոս մեռելներէն յարութիւն առած չըլլար,
Անոր հակառակորդները իրաւունք պիտի ունե-
նային ըսելու, «Անիկա անօրէն մըն էր եւ Աս-
տուծոյ հայհոյող, ուստի Աստուած ալ զԱյն մահ-
ուան դատապարտեց»: Այդ պարագային ոչ ա-
շակերտները պիտի համարձակէին Անոր վրայով
սորվեցնել եւ ոչ ալ մէկը պիտի ուզէր լսել ա-
նոնց: Սակայն Յիսուսի յարութեան իրականու-
թիւնը փշրեց մարդոց դիմադրութիւնը եւ գա-
նոնք Անոր ոտքը խոնարհեցուց, քանզի անոնց
վստահութիւն ներշնչեց թէ Անոր վրայ է հաճու-
թիւնն Աստուծոյ, Որ զԱյն յարուցած է եւ ա-
տով զԱյն «Տէր ու Օծեալ» ըրած, «Առաջնորդ ու
Փրկիչ ըլլալու բարձրացուցած» (Գործ. Բ. 36, Ե.
30, 31), եւ հաստատած է թէ Անիկա Իր Որդին
է (Հոով. Ա. 4): Ատկէ զատ անոնց հաւատք տը-
ւաւ թէ Քրիստոս իբր «առաջին պտուղը ննջեց-
եալներու», պիտի խափանէ մահը, «վերջին թըշ-
նամին»: Պիտի յարուցանէ եւ կենդանի պիտի
ընէ բոլոր Իրեն հաւատացողները (Ա. Կոր. ԺԵ.
20-23, 26):

Ահա՛, այդ հաւատքը հիմնեց, զօրացուց ու

աճեցուց եկեղեցին: Թէեւ անիկա նախապէս
բաղկացած էր անուս, արհամարհուած, հալածեալ
ու տկար մարդոցմէ եւ զրկուած՝ այն բոլոր ար-
տաքին միջոցներէն ու առաւելութիւններէն, ո-
րոնք յաղթութեան պայմաններն են, այսու ա-
մենայնիւ նա յաղթեց աշխարհի, քանզի յենած
էր Քրիստոսի յարութեան իրականութեանը եւ
անկէ բոլոր հաւատքին վրայ թէ իր կենդանի
Փրկիչը հաւատացեալին ալ յարութիւն պիտի
շնորհէ: Այդ հաւատքը իր ամբակուտ խարխիւն
էր մահուան սարսափին դէմ եւ իր շրթներուն
վրայ կը գնէր խիզախ մարտակոչը. — «Ո՛ր է,
ով մահ քու խալթոցդ, ո՛ր է ով գերեզման քու
յաղթութիւնդ» (Ա. Կոր. ԺԵ. 55) եւ ոյժ կուտար
ուրախութեամբ համբերելու, տոկալու ամէն
կարգի զրկանքի, տառապանքի ու մահուան,
մինչեւ որ պատկառանք ներշնչեց իր հակառա-
կորդներուն եւ անոնցմէ շատեր խոնարհեցուց
խաչին ոտքը:

Առանց Քրիստոսի յարութեան իրականու-
թեանը անկարելի պիտի ըլլար այդ արդիւնքը,
եկեղեցիին ծնունդը, աճումը ու յաղթութիւնը:

Թերեւս առարկուի թէ ուրիշ շատ կրօններ
գոյութիւն ունին, բայց անոնցմէ ոչ միոյն հիմ-
նադիրը յարութիւն առած է: Շիտակ է, բայց
հարցը կը տարբերի քրիստոնէական եկեղեցւոյն
համալ, վասնզի ասոր Հիմնադիրը ըսած էր որ
Ինքը կենդանի Աստուծոյ Որդին է, իրաւունք
ունի մեղքերը ներելու եւ վերջին դատաստան
ընելու. ըսած էր նաեւ թէ յարութիւն պիտի առ-
նէ: Եւ ճիշդ այս խօսքերուն համար էր որ Իս-
րայէլի առաջնորդները զԱյն նկատած էին հայ-
հոյիչ, ու դատապարտած մահուան: Արդ՝ եթէ
յարութիւն չառնէր, աշխարհ պիտի վճռէր թէ

քահանայապետներն ու փարիսեցիները իրաւունք ունէին.— Յիսուս ստախօս մըն էր եւ հայհոյիչ. պէտք էր որ խաչուէր: Այդ պարագային ինչպէս կարելի պիտի ըլլար քրիստոնէութեան ծնունդն ու զոյութիւնը: Յարութիւնն էր որ ազատեց Քրիստոսի պատիւը եւ ծնաւ եկեղեցին:

4. Միայն յարութեան իրականութիւնով կը բացատրուի վերստին ծնունդը ներկայ ժամանակին մէջ.— Պետրոս ըսած է, «Աստուած... մեզ նորէն ծնաւ կենդանի յոյսի համար Յիսուս Քրիստոսի մեռելներէն յարութիւն աւանդովը» (Ա. Պետ. Ա. 3): Գործք Առաքելոցէն եւ թուղթերէն գիտենք որ այս խօսքերը բառ առ բառ իրականութիւն են առաքելներուն եւ աշակերտներուն կեանքին մէջ: Յիսուսի յարութեան վրայ եղած հաւատքը զանոնք բոլորովին նոր մարդիկ ըրաւ, հիմնովին փոխեց անոնց նկարագիրն ու կեանքի ուղղութիւնը: Այդ հաւատքը այսօր ալ նոյն արդիւնքը ցոյց կուտայ: Բոլոր հաւատացեալներն վկայ ենք այդ իրողութեան: Վկայ ենք թէ մենք առաջ «յանցանքներու մէջ մեռած էինք», «մարմինն ցանկութիւններովը կը պարտէինք», մեղաց գերի էինք եւ զրկուած Աստուծոյ խաղաղութենէն, բայց Աստուած Իր շնորհքովը մեզ յարուց, մեզի զգուելի դարձուց մեղքը եւ զգայարանք տուաւ երկնային, հոգեւոր իրականութիւններու համար, մեզ դուրս հանեց մեր խաւար ու անյոյս վիճակէն եւ լոյսի ու յոյսի առաջնորդեց, երբ հաւատացինք թէ Քրիստոս մեր «յանցանքներուն համար մատնուեցաւ, ու մեզ արդարացնելու համար յարութիւն առաւ» (Հռով. Դ. 24, 25):

Վկայ են մանաւանդ անոնք, որոնք առաջ գերի էին գինեմոլութեան, բաղդախաղի եւ ուրիշ ստորին մոլութիւններու, եւ էին զոգեր, մարգասպաններ եւն. եւ որոնց կեանքը չարիք մը, դժոխք մըն էր իրենց ու մարդկային ընկերութեան համար: Բայց յետոյ փոխուեցան, իրենց սրտերը սիրոյ եւ սրբութեան զգացումներով լեցուեցաւ եւ իրենց երբեմնի մոռալ, դժոխային աչքերէն ու դէմքերէն սկսաւ ուրախութիւն ու խաղաղութիւն արտացոլալ, քանզի սա ստեղծագործ, հրաշալի ապրումն ունեցան՝ թէ Քրիստոս իրենց մեղքերուն համար մեռած է ու իրենց կեանք տալու համար յարութիւն առած, եւ հիմա իրենց քով ներկայ է ու Էկը սիրէ զիրենք:

Այս ճշմարտութիւնը հանձնատեղու համար կրնայինք շատ օրինակներ բերել, բայց տեղը չներեր: Միայն թէ ընթերցողը թող յիշէ Սա-

ստու Սուրտարը, ձօրճ Միւլըրը եւ Ճաքոնցի Իշիին, որուն վրայ զրեցինք «Բանբեր»ի նախորդ թուոյն մէջ: Սատու կեանքէն ձանձրացած, անձնասպանութեան մօտ անձ մըն էր, ձօրճ Միւլըր շատ մը մոլութիւններու գերի, եւ Իշիի մահուան դատապարտուած ոճրագործ մը: Սակայն երեքն ալ հրեշտակներու փոխուեցան, երբ խաչեալ ու յարուցեալ Քրիստոսի հաւատացին, ապրումն ունեցան թէ Ան կ'ապրի եւ իրենց Տէրն ու Փրկիչն է: Ընթերցող, չկրնար օգին մէջ կառուցուած ըլլալ հաւատք մը որ կարող է այդպիսի փոփոխութիւն յառաջ բերել, կարող է բարոյապէս ու հոգեպէս մեռած մարդիկը նոր կեանքի առաջնորդել:

Ահա այս չորս ապացոյցները բաւական են Քրիստոսի յարութեան իրականութեան համոզելու այն բոլորը, որոնք ճշմարտութիւնը կը փնտռեն ու անոր հնազանդիլ կ'ուզեն: Ուստի ամուր բռնենք մեր այս դաւանանքը եւ զոչենք սամբողջ աշխարհի առջեւ, «Քրիստոս յարեալ ի մեռելոց»

Գ. Գ. Խ.

Հով. ԿԵԱՆՔ

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՃՈՒՄԸ

Բ. Մենք սերտելու ֆէնք Սուրբ Գիրքը: Այս արդէն յայտնի է: Քանզի եթէ Սուրբ Հոգին իմ մէջս պիտի գործէ՝ Անոր թոյլ տալու եմ որ Իր գործը տեսնէ: Ի՞նչ է Անոր գործը: Յիսուս ըսաւ, «Անիկա Զիս պիտի փառաւորէ, վասնզի Իմինէս պիտի տանէ ու ձեզի պատմէ» (Յովհ. ԺԶ. 14): Սուրբ Հոգին Իրմէն չիօսիր, այլ Քրիստոսի խօսքերը առնելով լոյս կը սփռէ անոնց վրայ ու զանոնք մեզի կը ներկայացնէ: Ամբողջ Սբ. Գիրքը Քրիստոս Յիսուսով լեցուն է. Ուրեմն եթէ կ'ուզենք որ Սուրբ Հոգին մեր կեանքերուն մէջ զօրաւոր կերպով գործէ, Սուրբ Գիրքը մեր զիրքն ըլլալու է: Սուրբ Գիրքը Սուրբ Հոգին հեղինակութիւնն է, Անոր լեզուն է: «Ուստի ինչպէս կ'ըսէ Հոգին Սուրբ, Այսօր եթէ Անոր ձայնին պիտի լսէք, ձեր սիրտերը մի՛ խտացնէք (Եբր. Գ. 7) կ'ըսէ Եբրայեցիս թուղթին հեղինակը: Խտացած սիրտը անգոր սիրտ մըն է: «Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է» (Բ. Տիմ. Գ. 16): Սուրբ Գիրքին մէջ՝ Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժուած խօսեցան (Բ. Պետ. Ա. 21): Սուրբ Գիրքը Աստուծոյ ձայնն է, զայն լսէ՛, կարդա՛: Տէրը մասնաւորապէս կ'օրհնէ Իր

խօսքը լսողները եւ անոր հնազանդողները ու անոնց միջոցաւ Իր գործը յառաջ կը տանի: «Ես ասոր պիտի նայիմ, այսինքն խոնարհին եւ կոտորած հոգի ունեցողին ու Իմ խօսքէս գողացողին» (Եսայ. 42. 2):

Սրբութեան կը ցանկանք: Յիշենք թէ ճշմարտութեան խօսքովը կը սրբուինք (Յովհ. Ժ. 17): Յիսուս անձամբ կ'ըսէ, «Այն խօսքերը որոնք Ես ձեզի խօսեցայ, հոգի ու կեանք են» (Յովհ. 2. 63): Յարութիւն առնելէ վերջ՝ Տէրը լռաւ ջինջ անքն երկիրքի փառքին վրայով պատմել չեղաւ, այլ «զիրքերը մեկնել» եւ Իր աշակերտներուն «միտքերը բանալ որպէսզի գիրքերը հասկնան» (Դուկ. Ի. 32-45):

Միեւնոյն Սուրբ Հոգիին փափաքն է այսօր մեր սիրտերը բանալ որ Աստուծոյ ըսածներուն ուշադրութիւն տանք (Գործ. Ժ. 14): Աստուծոյ մեզի հանդէպ ցուցուցած վերաբերումը հասկնալու միակ ճամբան Սուրբ Գիրքը գիտնալն է: Եթէ Պետրոս մարգարէներուն սորվեցուցածներուն ծանօթ չըլլար, ինչպէ՞ս պիտի կրնար պէնտէկոստէին օրը վստահութեամբ աղաղակել, «Ասիկա այն է որ Յովել մարգարէին ձեռքով ըսուեցաւ» (Գործ. Բ. 16):

Աստուծոյ խօսքը Սբ. Հոգիին միջոցով տրուեցաւ, ուրեմն Սուրբ Հոգին միայն կարող է զայն նաեւ մեզի մեկնել: Մեր ամբողջ գիտցածը Սբ. Հոգիին միջոցաւ սորված ենք: «Մէկը չկրնար Յիսուսը Տէր կոչել, եթէ ոչ Հոգւով Սրբով» (Ա. Կոր. ԺԲ. 3): Ամենահմուտ աշակերտն իսկ չի կրնար առանց Սբ. Հոգիին օգնութեան Սբ. Գիրքին մէջ յայտնուած Աստուծոյ խորունկ ճշմարտութիւնները հասկնալ: Սուրբ Գիրքը հասկնալու համար «Քրիստոսի միտքը» ունենալու ենք: «Մենք կը խօսինք ոչ թէ մարդկային իմաստութեան սորվեցուցած խօսքերովը, հապա Հոգիին սորվեցուցածներովը» (Ա. Կոր. Բ. 13) կ'ըսէ Պողոս: «Աստուծոյ իմաստութիւնովը աշխարհ չճանչցաւ զԱստուծոյ Իր իմաստութիւնովը» (Ա. Կոր. Ա. 21): Սուրբ Հոգիով ձեռք բերուած հրատմութիւնը անգին զանձ մըն է, սակայն առանց Անոր ստացուածը թակարդ մը եւ խաբէութիւն մը: Զօրութեամբ լեցուած քրիստոնեան անձ մըն է, որ կարող է Պողոս առաքելի հետ ըսել՝ «Իմ խօսքս եւ քարոզութիւնս ոչ թէ մարդկային իմաստութեան համոզիչ խօսքերով էր, հապա Հոգւոյն եւ զօրութեան ապացուցութիւնովը» (Ա. Կոր. Բ. 4): Աստուծոյ խօսքը մեր մէջ բնակող Սուրբ Հոգիին սուրն է (Եփես. 2. 7): Նայինք որ Անիկա առանց այդ սուրին չմղէ մեր ճակատա-

մարտները: Սուրբ ինքնին՝ առանց զայն շարժող ձեռքի մը՝ բան մը չկրնար ընել: Ուրեմն Սուրբ Գիրքը՝ առանց Սուրբ Հոգիին՝ չկրնար ռեւէ ազդեցութիւն ունենալ: Ան էր որ Պողոս առաքելի միջոցով խօսելով ըսաւ, «Առէք Հոգիին սուրը որ Աստուծոյ խօսքն է (Եփես. 2. 7), Հոգիին սուրն է՝ որովհետեւ Ինքը զայն ձուլած է ու կըրնայ զայն նաեւ սրել: Միմիայն Սուրբ Հոգին կարող է զայն գործածել ու անոր գործածութիւնը մեզի ալ սորվեցնել:

Սուրբ առէք: Զինուորները արաօնութիւն չունին իրենց ուզած զէնքը ընտրելու: Աստուծոյ խօսքին գործը ոչ թէ միայն զմեզ մխիթարելու, մեզի վկայութեան զօրութիւն տալու է, այլ նաեւ զմեզ մեր հոգեւոր թշնամիին դէմ պաշտպանելու է: Երբ Տէրը անապատին մէջ Սատանայէն փորձուեցաւ, Անիկա Աստուծոյ խօսքին սուրը ձեռքը առաւ հակառակ անոր որ տակաւին Հին Կտակարանը միայն գրուած էր: Յիսուս կարող էր ուրիշ զէնքերու զիմեղ կամ զօրութեան նոր խօսք մը արտասանել, բայց այդպէս չըրաւ, այլ «Հոգիին սուրին» զիմեց: Մենք ալ նոյնպէս ընելու ենք: Մեր հոգիները սնանկու են որպէսզի զօրանան: «Ոչ թէ միայն հացով կ'ապրի մարդ, հապա այն ամէն խօսքովը որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ» (Մատ. 7. 4):

գ. Աղօթքը: Սուրբ Գիրքին միջոցով Աստուած մեզի հետ կը խօսի, աղօթքով մենք Անոր հետ կը խօսինք ու մտիկ կ'ընենք Անոր ձայնին: Աստուած կը սիրէ որ Իրեն հետ հաղորդակցինք: Սակայն ճիշդ ինչպէս որ Մենք անկարող ենք Սուրբ Գիրքը հասկնալ առանց Սուրբ Հոգիին ուսուցման ու լուսաւորման՝ նմանապէս անկարող ենք աղօթել առանց Անոր օգնութեան: Տէրը կ'ըսէ, «Ճշմարիտ երկրպագողները երկրպագութիւն պիտի ընեն Հօրը Հոգւով ու ճշմարտութիւնով, վասնզի Հայրն ալ Իրեն այնպիսի երկրպագողներ կ'ուզէ» (Յովհ. 7. 25): Աղօթքի շատ ժամանակ տալով միայն կրնանք զօրութեամբ լեցուած քրիստոնեաներ ըլլալ: Քրիստոնեայի մը ինքզինքը ամենէն զօրաւոր զգացած ժամանակը աղօթքի ժամն է: Ամէն աղօթքի աղերս սակայն Սուրբ Հոգին է: Երկիրքի մէջ Տէրը մեզի համար կ'աղօթէ: «Միշտ կենդանի է (մեզի համար) բարեխօս ըլլալու» (Եբր. Ի. 25): Անոր բարեխօսութեան կը պարտինք ամէն ինչ: Իր բարեխօսութեամբ Անիկա «Բոլորովին կարող է ապրեցնելու զանոնք որ Իրմով Աստուծոյ կուգան» Մեր բաղձանքն ալ արդէն այս կատարեալ փրկութիւնն է:

Չենք գիտեր թէ ինչ բանի համար կ'աղօթէ, բայց գիտենք թէ, երբ Պետրոս զԱյն պիտի ուրանար՝ անոր ըսաւ՝ «Ես քեզի համար աղօթք ըրի, որպէսզի քու հաւատքդ չպակսի» (Ղուկ. ԻԲ. 32): Անոր աղօթքները անհատական են: Մեզի պէտք եղածը ամէն վայրկեան Քրիստոսի մէջ գտնուիլ է:

Աստուծոյ Հոգին եկած է յաւիտեան մեր մէջ եւ մեզի հետ բնակելու: Մեզի կարելի է Անոր «հակառակիլ», զԱյն «տրամեցնել» ու «մարել», այնպէս որ կարող չըլլայ մեր միջոցով դործել, սակայն Անիկա եկած է Իր բնակութիւնը յաւիտեան մեր մէջ հաստատելու: Սուրբ Հոգիով լեցուած մնալու համար՝ աղօթքով լեցուած ըլլալու ենք, քանզի Անիկա շնորհքի եւ աղօթքի Հոգին է (Չաք. ԺԲ. 18): Մեր աղօթքները լսելի ըլլալու համար՝ «Սուրբ Հոգիով» (Յուդ. 20) այսինքն Անոր ներշնչումովն ու զօրութեամբը աղօթելու Բնք: Մեր աղօթքները մեր զօրութեան ստույգ ապացոյցներն են: Երբ պապ ու անտարբեր կ'զգանք՝ Հոգիինք աղօթելէ, քանզի ճիշդ այդպիսի պարագայի տակ ամենէն շատ կը կարօտինք աղօթքի: «Այնպէս ալ Հոգին օգնութեան կը հասնի մեր տկարութիւններուն, քանզի ինչ բանի համար աղօթելու ենք, չենք գիտեր, բայց Ինք, Հոգին բարեխօս կ'ըլլայ մեզի համար անբարբառ հառաչանքներով եւ սիրտերը քննողը գիտէ Հոգիին ինչ խորհիլը, քանզի Աստուծոյ կամքին համեմատ բարեխօսութիւն կ'ընէ սուրբերուն համար» (Հոով. Ը. 26, 27): Սուրբ Հոգին է որ մեր մէջ աղօթելու փափաքը կը զնէ, մեզի կը սորվեցնէ թէ ինչ աղօթելու ենք եւ Ինք մեր տեղը կ'աղօթէ: Սուրբ Հոգիին բարեխօսութիւնը մեր մէջը նոյնքան ապահով, ստույգ, ուժեղ եւ աստուածային է՝ որքան Որդիին բարեխօսութիւնը Աստուծոյ աջ կողմը:

Սբ. Հոգիին միջոցովն է որ մեր մարմինները Իր տաճարը կ'ըլլան եւ մենք Քրիստոսի մարմինին անդամները: Այս տաճարները աշխարհային բաներով սրբապղծուելու չեն որ Սուրբ Հոգին ստիպուի չուանէ խարազան մը առնել եւ գնողներն ու ծախողները Իր տաճարէն վռնուել, որ ան իրապէս «աղօթքի տուն» մ'ըլլալ կարենայ: Կարելի է որ մենք ծուռկի վրայ գտնուինք մարմնով մինչ մեր հոգիները Աստուծոյ դահէն շատ հեռու ըլլան եւ մեր աղօթքները շրթունքի բառեր միայն: Աղէտալի ճշմարտութիւն մըն է թէ նոյնիսկ կրնանք մեր կեղծ աղօթքներով աւելցնել մեր մեղքերուն թիւը: Իսկապէս ուղիւ եւ ենք մեր խնդրածը եւ լրջօրէն բաղձալու

մեր աղօթածին:

Ամէն գնով Աստուծոյ աղօթելու փափաքը փառաւոր բան մըն է: Աստուծոյ խօսքը, Հոգիին սուրբ խիստ զօրեղ է, սակայն նոյնիսկ Աստուծոյ ամբողջ ապառազինութիւնը բաւական չէ՝ ճակատամարտը շահելու, մինք կարօտ ենք նաեւ աղօթքի:

«Ասկէ ետեւ եղբայրներ, զօրացէք Տէրոջմով ու Անոր զօրութեան կարողութիւնովը: Վրանիդ հաղէք Աստուծոյ ապառազինութիւնը... ու ամէն բանը լմնցնելէն ետեւ հաստատուն կայնելու: Ամէն աղօթքով ու խնդրածքով ամէն ատեն աղօթք ըրէք Հոգիով» (Եփես. 2. 10-18):

Տէրը մօտ է:

ՅԻՍՈՒՍ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԱՇ

Ղուկ. ԻԲ. 63 — ԻԳ. 25

Այս պատմութիւնը մեզի կը ներկայացնէ Տէրոջը հանգէպ մարդկային հոգւոյն երեք դիրքերը. — Հրէաներու ոխը, Պիղատոսի թուլութիւնը, Հերովդէսի անարգանքը:

ա) Հրէաները. — «Երբ առաու եղաւ, ժողովուրդին ձերակոյտը, քահանայապետները եւ դպիրները ժողովուեցան, եւ տարին զԱնիկա իրենց ատեանը» (Ղուկ. ԻԲ. 66): Մարդկային ցեղին ամենամեծ ոճիրը գործուած է իր ընտրեւագոյն մասով: Ծերակոյտը, քահանաները, դպիրները՝ ժողովուրդին զուլաւ. վարիչները, առաջնորդներն էին ընկերային եւ բարօրական տեսակէտով: Անոնք ինքզինքնին կը ցուցնէին որպէս կարգապահներ եւ արդարութեան պաշտպաններ: Սահեարոնը Հրէաներու ամենաբարձր ատեանն էր՝ քաղաքական, ազգային եւ կրօնական գործերու համար: Իր սրբաւանգ առջեւ ժողովուրդը կը խոնարհէր: Արդ, իշխանութիւն ունեցող այս մարդիկն են որ ինքզինքնին կը յայտնեն որպէս ամենէն կատաղիները փառաց թագաւորին դէմ, զՈր կը դատապարտեն եւ Որուն մահը կ'ուզեն: Մասնաւորապէս անոնք կը պօռան. — «Վերցուր Ատիկա, խաչը հանէ Ատիկա, խաչը հանէ»:

Անսովոր տեսարան, որ մեր ցեղին անպիտանութիւնը կը պատկերացնէ եւ մեր հպարտութեան բոլոր պատճառները կը վերցնէ: Այս մարդիկը ամենէն առանձնաշնորհալիները, ամենէն ուսեալներն էին. Երուսաղէմ շատերուն համար աշխարհի բարոյականութեան մայրաքաղաքն էր, եւ այս մարդիկը Երուսաղէմի ճշմարիտ աւերներն էին: Այսու հանդերձ Տէրոջը մահը անոնց

գործն է. անոնք հոս կ'երեւան ամենէն անարգարները, ամբարտաւանները, կատաղիները: Խաշը ամենէն ինկած մարդկութեան գործը չէ. այլ ամենէն զրաւիչ կերպարանքին տակ եղող մարդկութեան գործը: Ասիկա այն մարդոց ոճերն է որ ինքզինքնին կը կարծեն պատուաւոր, յարգուած եւ առանց մեղադրանքի:

Փարիսեցի՛, ամբողջութեամբ լեցուած քու անձնական արդարութեամբդ, ասա՛ ինչ բանի կարող ես: Հոս եկէք, ո՛վ դուք ձեր անձէն զոհ եղողներ եւ սորվեցէք վերջապէս տեսնել ինքզինքնիդ ինչպէս որ էք. — դուք ոճրագործներ էք, աստուածութեան դէմ յանցապարտներ:

Աստուածութեան դէմ՝ ոճիր. — Ան գոր անոնք մեռցնել կ'ուզեն, Աստուծոյ Որդին է: Անոնք զայս գիտեն: Յիսուս անգամ մը եւս ասիկա անոնց կ'ըսէ. — «Ուրեմն Դու Աստուծոյ Որդի՞ն ես»: Ինք ալ ըսաւ անոնց, «դուք կ'ըսէք թէ Ես եմ» (Ղուկ. ԻԲ. 70): Անոնք գիտեն թէ Յիսուս Աստուծոյ Որդին է, ոչ միայն Տէրոջը խօսքերուն, հապա նաեւ Անոր գործերուն վկայութեամբը: Ինք իր աստուածութիւնը հռչակելէն աւելին ըրած է. Ինք զայն լեցուն կերպով յայտնած է իր բոլոր գործերով, իր ամբողջ կեանքով: Յիսուս անոնց համար անծանօթ մը չէ: Անոնք կրցան զԱյն լսել եւ գննել իր պաշտօնէութեան սկիզբէն ի վեր: Բայց որքան Ան ինքզինքը անոնց յայտնեց որպէս Աստուծոյ Որդին, այնքան անոնք գինքն ասեցին, ասեցին մինչեւ մահ:

Անոնք անկեղծութեամբ ճշմարտութիւնը փնտռողներ չեն: Երբ կ'աղաղակեն, «Եթէ Քրիստոսը Դու ես, ըսէ մեզի», գիտնալ ուզելու եւ Տէրոջը առջեւ խոնարհելու համար չէ, այլ յայտնապէս Անոր դէմ կենալու համար:

Անոնք չեն ըսեր, Դու Քրիստոսը չես, հապա կ'ըսեն, Դու պիտի մեռնիս: ԶԱյն չեն ուզեր: Անոր մեծաշնորհութիւնը չեն ուրանար, այլ ատոր կ'ընդդիմանան: Անոնք կը մերժեն ճշմարիտ Քրիստոսը, կատարեալ սրբութեան, անսահման սիրոյ Քրիստոսը: Անոր տեղ կ'ընտրեն Բարաբրան, ապստամբը եւ մարդասպանը, ցուցնելով այսպէս թէ անոնք մեղքը կը գովեն. ասոր համար է որ անոնք Փրկիչը կը զատապարտեն: Այս է Յիսուսը մերժելուն խորունկ պատճառը, որ Անոր մէջ Բարաբրայի ոչինչ կայ, ոչինչ այն զգացումներէն զոր Բարաբրաներ եւ անոր պաշտպաններ ունին: Որքա՛ն ճշմարիտ է սա խօսքը. — «Հոյսը աշխարհ եկաւ. ու մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, քանզի իրենց գործերը չար էին» (Յովհ. Գ. 19):

Մարդիկ Յիսուսը կը մերժեն ոչ թէ Անոր աստուածութեան կասկածելուն համար, այլ որովհետեւ անոնք չեն ուզեր Աստուած մը որ չաբողջութիւնը կը զատապարտէ եւ անոր յաղթել կ'ուզէ իրենց մէջ: Անոնք կը մեռցնեն զԱյն, Որդիներն ապրեցնել կ'ուզէ:

Արդարեւ, ներկայիս եւ անցեալին, Յիսուսի աստուածութիւնը մերժելուն ետեւը ի՛նչ կայ: Միամիտ ագիտութիւն, գիտութեան պակաս, լոյսի չգոյութիւն: Բնա՛ւ. այլ լոյսին դէմ կենալ, անօրէնութեան կապուիլ: Անհաւատութեան ճշմարիտ լեզուն՝ «Ես Յիսուսի աստուածութեան չեմ հաւատար» չէ, այլ, «Ես Աստուծոյ Որդին կոչուող Յիսուսը չեմ ուզեր»:

«Վերցուր, խաշը հանէ Ատիկա, խաշը հանէ», այս է Յիսուսը մերժող սրտին աղաղակը:

բ) Պիղատոս. — Ան գոնէ Յիսուսի արդարութիւնը յայտարարելու եւ զԱյն պատուելու արժանիքն ունի: «Ես այն մարդուն վրայ յանցանք մը չեմ գտներ» (հր. 4), «...Ատոր համար ձեր ըրած ամբաստանութիւններէն յանցանք մը չգտայ այդ մարդուն վրայ» (հմր. 14): «Բայց ի՛նչ չար գործ ըրած է Ատիկա. ես ատոր վրայ մահու արժանի յանցանք մը չգտայ» (հմր. 22):

Պիղատոս անկեղծ է եւ մեծարանքը որ ան Տէրոջը կուտայ, մեծ արժէք ունի մեզի համար: Ան կը ցուցնէ որ Յիսուս իրականապէս անմեղադրելի է բոլորին աչքերուն առջեւ եւ թէ ոչ ոք կրցած է զԱյն սխալի մը մէջ գտնել: Բայց նոյն ատեն կը ցուցնէ թէ թուութիւնը նոյն դերը կը խաղայ, ինչ որ ունայնամտութիւնը: Սահետրոնի անդամները կ'ուզեն Յիսուսը մեռցնել, վասնզի անոնք կը մերժեն ինքզինքնին մեղաւոր ճանչնալ. Պիղատոս կը հաւանի որ Ան մեռնի, որովհետեւ իր դիրքը կորսնցնելէն, Արդարին պատճառաւ տառապելէն կը վախնայ: Անոնք իրենց հպարտութիւնէն իսկ միւսը պաշտօնէն չեն կրնար հրաժարիլ: Վերջնական վերլուծումով արդիւնքը նոյնն է: Ոճիրին ի գործ դրուիլը թուլատրել ծանր է, անձամբ զայն ընելու չափ: Ով որ բաց կերպով եւ ամբողջութեամբ Աստուծոյ Որդւոյն կողմը չէ, Անոր հակառակ է:

Հոս դարձեալ կը տեսնենք որ Յիսուսը մերժելը տգիտութենէ յառաջ չգար եւ ոչ մանաւանդ խղճին հաւատարիմ մնալէն՝ այլ միմիայն սննդասիրութեան: Ով որ ինքզինքը կը սիրէ, Աստուծոյ Որդին կ'ատէ:

Ատելու շատ մը կերպեր կան, սպաննելու ալ: Հակառակ Տէրոջը համար իր տուած վկայութեան, Պիղատոս Անոր սպաննիչներէն մէկն է:

Անոր եւ շատ մը ուրիշներու կը պատշաճի Յովհաննէս տաքեալին խօսքը. — «Եթէ մէկը աշխարհը կը սիրէ, անոր ներսիդին չօրը սէրը չի կայ» (Ա. Յովհ. Բ. 16):

զ) շերտվուէս. — Կը ներկայացնէ բոլոր անոնք որ կը ծաղրեն ու կը նախատեն Աստուծոյ Որդին՝ Անկէ զանգատելով: Անոնք կ'ըսեն թէ կ'ուզեն հաւատալ, բայց թէ հաւատալու համար բնաւ ապացոյց չունին, անոնց պէտք է ուրիշ հրաշքներ, ուրիշ նշաններ (Ն. 8): Պիտի խոնարհին խորհրդաւոր երեւութի մը առջեւ, օտար լոյսերու՝ չլուած գործերու առջեւ. անոնք ազդակով պիտի ողջունէին երկինքի ամպերով երեւցող Քրիստոս մը, բայց չեն ուզեր չարչարուած, ատենի առջեւ ներկայացուած, մորթուելու տարուած ոչխարի պէս տանջանքի ենթարկուած Քրիստոս մը: Այս Յովթուածը անոնց անհաճոյ է, չեն յարգեր վշտաց տէր Մարդը: Անոնց պէտք է մարդկային փառքով պսակուած թագաւորը, բայց ոչ փուշով պսակուածը. փառաբանուած, որպէս մարդկութեան հերոսը պատուելուած Քրիստոսը՝ բայց ոչ աշխարհի մեղքերուն համար խաչուած Քրիստոսը:

Հոս նմանապէս Փրկիչը մերժել: Հերովդէս, Պիղատոս, քահանայապետները, դպիրները, ծերերը, բոլորն ալ իրարու կը նմանին, բոլորն ալ միացած են սա հանրական դիրքին. — Պատերազմ Փրկչին, Աստուծոյ Որդոյն դէմ: Բոլորն ալ կը համաձայնին սա կէտին մէջ, անհամաձայն ըլլալով հանդերձ ուրիշ շատերու մէջ. — Անոնք չեն ուզեր զԱյս Որ Յիսուս կը կոչուի: Փրկութեան դէմ այս ընդհանուր ընդդիմութիւնը ընդհանուր կորուստ մը կը յայտնէ: Խաչը ցեղին միութիւնը կը յայտնէ. — Միութիւն՝ փրկութեան անհրաժեշտութեան տեսակէտով:

Ինչ երանութիւն մեզի համար կարենալ աւելցնել նաեւ. —

Խաչը կը յայտնէ ցեղին միութիւնը փրկութեան կարելիութեան տեսակէտով ալ. —

«Այս Աստուծոյ Գառը որ աշխարհի մեղքը կը վերցնէ»:

Թարգ. Ի. Յ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Սէնթ Էթիէն

Ե՛Ս ԵՄ

Ես եմ Ալֆան եւ Օմեղան, Առաջինը եւ Վերջինը, Սկիզբը եւ Վախճանը: Յայտ. ԻԲ. 43

Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր
և յաւիտեանս: Եբր. ԺԳ. 8

Միամբտօրէն կը կարծէի ես թէ՛ այս աշխարհիս գարունը ազուրկ, Արեւը ջերմիկ, դաշտերը դալար, ծաղիկ ու թռչուն, լոյս, երգ ու ժրպիտ՝ կեանքի անփոփոխ ու յաւիտենական բլրներեւոյթն է յաւէտ ճրջմարիտ. Ու ես այդ չքնաղ եւ դրախտանուշ կեանքին վիճակուած մարդը բաղդաւոր:

Մանկական երա՛գ: Ոոկեցօժ պատրա՛նք: Հազար գոյնելով շինուած պլպլջակ, Որոնց խաբկանքի թոյնէն հաշիշուած, նիրհեցի երկա՛ր, խաղա՛ղ աներկբայ... Բայց գիտակցութեան եւ սթափումի հօր շունչին տակ բոլոր ահա՛ Խարխուլ եւ անհիմն դղեակներու պէս, հոգեցունցօրէն զարձան աւերա՛կ...

Ով ողբերգութիւն... կը փլատակուին համամարդկային հիմերը բոլոր. — Հայրենիք եւ ազգ եւ ընկերութիւն, իտէալ սէրերու շէնքը դարաւոր. Նիւթի, գիտութեան եւ գաղափարի ի՛նչ փլուզումներ մո՛ւթ եւ ահաւո՛ր...

Ու փորցառաբար՝ իմ անյաղթ Փրկչիս յաւիտենական «ԵՍ ԵՄ»-ն հասկայ թէ հոս Իրմէ՛ զատ՝ որ յաւիտենական դարերու անխախտ Վէժմն է մշտակայ, Ո՛չ մէկ կրօնախիթ գոյութեան կայ որ ժամանակի կուռ բոլունքին տոկայ:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՆՈՂ ՃԱՄԲԱՆ

5. ՍԽԱԼ ՅՈՅՍ ՄԻ ՈՒՆԵՆԱՐ

Եթէ Բրիտանոս մարդոց փրկութեան համար ամէն բան ըրած է, տակաւին չենք կրնար յուսալ յաւիտենական երանութիւն, երբոր Անոր հետ շիտակ յարաբերութեան մէջ չենք: Մը. Մուտի կը պատմէ որ պատերազմի տուն երիտասարդ մը մահուան դատապարտուեցաւ: Կը յուսար որ յանցանքը պիտի ներուի: Այդ յուսով բոլորովին հանգիստ էր. թերթերն ալ նոյն բանը կ'ըսէին, իբր թէ կառավարիչը դատապարտեալին ներում պիտի շնորհէ: Օր մը կառավարիչը հանդիպեցաւ ծանօթ մարդասէր Պը. Սթուարտին եւ ըսաւ անոր, «Կը ճանչնա՞ք այդ մահուան դատապարտուած երիտասարդը որ կը յուսայ թէ ես իրեն ներում պիտի շնորհեմ, սակայն ինծի համար բոլորովին անկարելի է, կը ինդրեմ, ըսէք իրեն լման ճշմարտութիւնը»: Ետքէն Պըն. Սթուարտ պատմեց ինձ, կը պատմէ Մը. Մուտի, թէ իր կեանքին մէջ ամենազօռար զործը այդ եղած էր, երբոր բանտը գնաց, երիտասարդը զինք զիմաօրեկով ըսաւ, «Դուք բարի մարդ մըն էք, ներման աւետիս կը բերէք ինծի»: Մը. Սթուարտ չէր գիտեր թէ ինչպէս յայտնէր իրեն ճիշդ բառը գտնելով: Նա ինքզինքը հաւաքելով և Աստուծոյ նայելով ըսաւ լման ճշմարտութիւնը: Տեսնելով որ իր սխալ յոյսը ի դերեւ ելաւ, երիտասարդը ինկաւ գետին ու ժառպաւ:

Սիրելի ընթերցողս, պէտք է որ բոլորովին լրջութեամբ քննենք թէ արդեօք մինչեւ հիմա սխալ յոյսեր ունեցա՞ծ ենք: Յիսուս կ'ըսէ, «Թագաւորը ներս մտաւ հիւրերը տեսնելու եւ գտաւ մարդ մը որ հարսնիքի հանդերձ հագած չէր, ըսաւ իրեն, «Ընկեր, ինչո՞ւ հոս եկար», եւ անիկա պապանձեցաւ: Անգամ մը այցելեցի հիւանդ մէկու մը որ անուանական քրիստոնեայ մըն էր, կը պատկանէր շատ մը եկեղեցական կազմակերպութեանց, խեղճ մեղաւոր մը չէր, բայց փրկուած ալ չէր: Յաճախ իրեն հետ խօսեցայ, բայց ի գուր. ան չուզեց համոզուիլ թէ սխալ յոյսերով կ'ապրի: Օր մը զինք գտայ անկողնոյ մէջ մահամերձ. իրեն կարդացի հարուստի եւ Ղազարոսի պատմութիւնը. ձգեց իր յեռարանները, զգաց թէ պէտք է մեղքէն ազատուի. պատահեցաւ իրեն ինչպէս կ'ըլլայ ուրիշ մեղաւորներու. տկար ձայնով մը ըսաւ, «Տէր Յիսուս, կ'ուզեմ»: Քանի մը ժամ վերջ տղայ մը եկաւ զիս կանչելու, ըսելով թէ հիւանդը կ'ուզէր ին-

ծի հետ խօսիլ: Գացի, եւ այժմ կրնայի ցուցնել թէ հակառակ ամէն մեղքի եւ անմաքրութեան, կրնանք նորէն ճշմարիտ աղբիւրին դիմել ու մաքրուիլ: Աստուած հին կեանքի աւերակներուն վրայ նոր մը շինեց:

Թարգ. (Վեր.) ՅԱԿՈԲ ԵՂԻԱՉԱՐԵԱՆ
Գովալա

ԻՐԱԿԱՆԷՆ ԳՈՐԾՆԱԿԱՆԵՐ

ԵՐԵՔ ԱՄԵՆԷՆ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՆԵՐԸ

Անգամ մը ուսանողի մը հարցուեցաւ թէ ի՞նչ են այն երեք բաները զոր ամենէն շատ կը ցանկայ ունենալ: Ուսանողը պատասխանեց, «Ինծի տուէք գիրքեր, առողջութիւն և հանդարտութիւն, եւ ուրիշ ո՛րեւէ բանի չեմ փափաքիր»:

Միեւնոյն հարցումը ուղղուեցաւ ազահի մը: Ազահը ազաղակեց. «Դրա՛մ, զրա՛մ, դարձեալ զրամ»:

Աղքատի մըն ալ հարցուցին թէ ո՛ր երեք բաները կը նախընտրէ: Աղքատը տկար ձայնով մը ըսաւ, «Հաց, հաց, հաց»:

Յետոյ գինեմովի մը հարց տրուեցաւ: Գինեմովը երեք բանի կը ցանկար ամենէն աւելի, «Ըմպելիք, նորէն ըմպելիք ու միշտ ըմպելիք»:

Մեծ բազմութեան մըն ալ նոյն հարցումը եղաւ: Եւ հաւ լսուեցան խառնիճաղանճ ձայներ ու մեծ աղմուկ, ուրկէ կը հասկցուէին հետեւեալ բացազանչութիւնները, «Մեծութի՛ւն, փա՛ռք, հարստութի՛ւն, պատի՛ւ, հաճոյքնե՛ր»:

Կարգը եկաւ աղքատիկ մարդու մը, որ ճշմարիտ քրիստոնեայ մըն էր, ու երբ ստիպեցին որ ան ալ իր փափաքները յայտնէ, ըսաւ, «Երեք բաներ կան զոր ամենէն աւելի կ'ըզձամ, առաջին՝ քրիստոսի պատկանիլ, երկրորդ՝ քրիստոսի նմանիլ, եւ երրորդ՝ քրիստոսի մէջ կենալ»:

Եթէ միեւնոյն հարցումը քեզի հարցուի հիմա, ի՞նչ պիտի ըլլայ քու պատասխանդ, սիրելի ընթերցող: Ի՞նչ են այսօր քու սիրտդ զբաւող, քու միտքդ զբաղեցնող երեք ամենէն ցանկալի բաները: Դուն ալ քու ձայնդ կը միացնես վերի բազմութեան աղաղակին, որ աղաղակն է ներկայ աշխարհի մեծագոյն մասին, թէ կը ձայնակցիս Քրիստոսով փրկուածին պատասխանին:

«Քանզի ի՞նչ օգուտ է մարդուն՝ որ բոլոր աշխարհը վասկտի ու իր անձը կորսնցնէ»: Մարկ. Ը. 36:

ԾԱԾԿՈՒԱԾ «ԱՆՈՎ»

Անգամ մը զինուորական բարձրաստիճան պաշտօնեայ մը օտար երկիր կը ճամբորդէր նաւով, իր հետ ունենալով իր կիներն ու զաւակները: Մի քանի օրէ ի վեր ծովուն վրայ խաղաղութիւն եւ հանգարտութիւն կը տիրէր: Բայց յանկարծ ահաւելի փոթորիկ մը պայթեցաւ Ամհի ալիքներ սկսան լեռնակոտակ դիզուել: Հովին սուղոցը եւ ծովուն գոռումը իրար խառնուած ահուդողի սարսափելի վիճակի մը մէջ ձգեցին խեղճ ճամբորդները: Նաւը փետուրի մը պէս կը տարուբերուէր, հակայ կոհակներուն խաղալիք դարձած: Բոլոր դէմքերը մեռելի կերպարանք ստացած էին: Կասկած չկար զրեթէ որ քիչ ետք բոլորը միասին ջուրերուն յատակը պիտի իջնէին նաւուն հետ:

Սակայն այդ ճամբորդներուն մէջ մէկը կար որուն դէմքը տարօրինակ խաղաղութիւն մը կը ցոլացնէր: Ան բնաւ չէր ազդուէր իր շուրջը անցած դարձածէն: Յայտնի էր որ իր հոգը չէր այդ սոսկալի վիճակը: Այդ անձը զինուորականն էր: Անոր կինը իր ամուսնոյն այս ընթացքը անսըրտութեան վերագրեց եւ սկսաւ յանդիմանել զայն, ըսելով որ եթէ իր անձին համար չէր վախնար, գոնէ իր կնոջ եւ զաւակներուն համար պէտք էր մտահոգութիւն ցոյց տար:

Ամուսինը ոչինչ պատասխանեց: Ան անմիջապէս դուրս ելաւ եւ քիչ վերջը ներս մտաւ իր ձեռքը բռնած մերկ սուր մը: Զինուորականը սուրին ծայրը ուղղեց իր կնոջ սրտին, լուրջ դէմքով մը, բայց կինը սեւէ սարսափ չյայտնեց ամուսնոյն այս բրածին համար:

— Ինչպէ՞ս, այս մերկ սուրը սրտիդ ուղղուած է եւ դուն բնաւ չե՞ս վախնար, ըսաւ ամուսինը:

— Ո՛չ, պատասխանեց կինը, որովհետեւ այդ սուրը մէջն է քու ձեռքերուդ, որոնք ինծի փառ հասցնել չեն ուզեր:

— Ուրեմն ինչպէ՞ս կ'ուզես որ ես սարսափիմ փոթորիկէ մը որ մեր գլխած երկնաւոր Հօրը ձեռքերուն մէջ է, յարեց զինուորականը:

Կեանքը փոթորկալից ծով մըն է այսօր. ի՞նչ փոյթ սիրելի ընթերցող, եթէ դուն կրնաս կատարեալ վստահութեամբ Քրիստոսի յանձնուել: Անիկա կրնայ սաստիկ հովին ու ծովուն: Զանազան դժուարութիւններ ու հոգեր ալիքներու պէս վրա՞դ կը դիզուին. մի վհատիր. հոգդ Տէրոջը վրայ ձգէ. գիտցիր որ քու անձդ Անոր կը պատկանի եթէ դուն զայն սիրով Անոր տուած ես. ու առանց Անոր գիտութեանը ճնշուել մը ան-

գամ զետին չիյնար: Վաղը անորո՞շ է քեզի համար ու ապագան մո՞լթ: Հանգարտ կեցիր, ժամանակները Անոր ձեռքին մէջն են:

«Տէրը բոլոր գինք սիրողները կը պահէ»

Սաղ. ՃԽԵ. 20

«Քեզ անունով կը ճանչնամ» Եւրեյ ԼԳ. 12:

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԸ

ԳԻՐՔ ԹՈՒՈՑ

(Մաս Բ.)

Նախորդ յօդուածով նկատեցինք թուոց գիրքին մէջ երեւցած մարդուն կարօտութիւնը եւ ձախողութիւնը: Յիշեցինք անհաւատութեան կաշկանդող եւ պատուհասող հետեւանքները: Այս է գիրքին մէջ երեւցած առաջին տեսակէտը: Այսօր կ'անցնինք գիրքին երկրորդ տեսակէտին: Բայց Աստուծոյ տեսակէտը տարբեր է, եւ այս տարբերութեան մէջ է մեր դարձանն ու խաղաղութիւնը:

Գիրքին առաջին մասին մէջ կը տեսնուի որ Աստուած միջոցներ պատրաստած է իր ժողովուրդին համար: Բանակը կարգի կը դրուի եւ կը պահանջուի անոր սուրբ պահուիլը: Բանակին պաշտամունքին համար կարելիութիւններ եւ տնօրէնութիւններ կան եւ անոր շարժումները կը կառավարուին Աստուծոյ անմիջական ներկայութեամբ, Ամպի Սիւնին միջոցաւ:

Ապա նկատեցինք Աստուծոյ համբերութիւնը որ զանազան եղանակներով կը յայտնուի: Դործըւած իւրաքանչիւր սխալի համար Աստուած պատժեց Իսրայէլը, բայց միշտ զանոնք իր ծրարագրին հտ ըրելու նպատակաւ: Ամէն պարագայ եւ վիճակ ծառայեցուց անոնց աչքերը բանալու եւ խորացնելու անոնց հոգեւոր գիտակցութիւնը: Քառասուն տարուայ թափառումներուն մեկնութիւնը այս է: Այս շրջանին Իսրայէլ ո՛չ թէ Աստուծոյ լքուած, այլ Աստուծոյ դպրոցին մէջ էր, սորվելու եւ մեծնալու համար: «Եւ միտքդ պահէ այն բոլոր ճամբան որ քու Տէր Աստուածդ այս քառասուն տարին քեզ անապատին մէջ պտտացուց, քեզ խոնարհեցնելու, փորձելու եւ սրտիդ մէջինը իմանալու համար, թէ արդեօք դուն Անոր պատուիրանքները կը պահե՞ս թէ ոչ» (Բ. Օրին. Ը. 2):

Աստուծոյ այս համբերութիւնը ի յայտ եկաւ այն բոլոր գերբնական միջամտութիւններով ո-

ընդամուլ պաշտպանեց Իսրայէլը: Անոնց հոգեւոր կեանքին, ազգային գոյութեան եւ ֆիզիքական կարօտութեանց բոլոր անհրաժեշտ պարագաներուն, Ան ետ չմնար գործելու եւ ազատելու համար: Ապստամբ ժողովուրդը մոռնալու կամ լրջելու փոխան, Աստուած յարատեւ համբերութեամբ եւ հալածող սիրով մը, կը դժուարանայ իրենց բաղդին եւ կորուստին ձգելու զանոնք, մինչեւ որ կարողանան կրկին եւ կրկին մտնել փրկութեան գօտիին մէջ: Այս աննկուն համբերութիւնը զիրենք ետ բերաւ Կադէս, Քանանի դռներուն առջեւ: Թափառումի քառասուն տարին լրացած էր, պատասխանատու տարբը ըստացած էր իր մեղքերու հատուցումը, Իսրայէլ գտնուած «չար ժողովքէն» եւ զօրացած Աստուած-յայտնութեան նոր գիտակցութեամբ մը՝ ժողովուրդը պատրաստ էր Աստուծոյ ծրագրին: Ինչպէս ուրիշ անգամներ, հոս ալ կրկին կ'երեւի թէ Իսրայէլ ձախողած էր, բայց Աստուած յաւիտեան անպարտելին կը մնար:

X

Աստուած չպարտուիր:

Թերեւս դիւրին է ըսել զայս, առանց սակայն խորապէս եւ գործնականապէս ըմբռնելու այս ճշմարտութեան տարողութիւնը: Աստուծոյ զերիշխանութեան այնքա՛ն կը կարօտի այս օրերուն եկեղեցին՝ որ կ'արժէ լսպէ մը կանգ առնել հոս:

Ելից զիրքը ցոյց կուտայ որ Աստուած չի պարտուիր Իր թշնամիներէն: Հոն կը տեսնենք դիւանագէտ եւ նենգամիտ Փարաւոնը իր արբանեակներով եւ իմաստուն մոգերովը: Յանէս եւ Յամբէս հմայութեան բոլոր գիտութիւնով կը հակառակէին Մովսէսի: Անխիղճ վերակացուներ կան, որոնց ետեւ կ'սպասէ զօրեղ բանակը: Սատանան այս բոլորը ձեռք կ'առնէ եւ կը ջանայ զանոնք գործածել փճացնելու Աստուծոյ ծրագրերը: Բայց Աստուած գերիշխան է. եւ Անոր ձեռքը կը ծանրանայ խոտասիրտ եգիպտացիներուն վրայ, մինչեւ որ Իսրայէլի լոյս եւ շուք եղող Հորեդէն Սիւնը, խաւար եւ խռովութիւն ըլլայ Եգիպտոսի եւ մինչեւ որ Ամենակարողին խօսքին ջուրի ամենի հեղեղները բնաջնջեն հալածող բանակները:

Քրիստոսի խաչակիր եկեղեցին, եւ անոր հաւածեալ եւ չարչարեալ անդամները այս պատգամին է որ կը կարօտին. Ռուսիոյ կամ Չինաստանի մէջ եւ կամ ամէն տեղ ուր զօրացող «անօրէնութեան խորհուրդը» զգայի կ'ընէ իր վատասերող ազդեցութիւնը:

Սակայն թուոց Գիրքը, զմայլելի եւ փառաւոր խորհուրդ մ'ալ կ'աւելցնէ Աստուծոյ զերիշխանութեան զազափարին: Աստուած չյաղթուիր Իր թշնամիներէն, բայց ի՞նչ կը պատահի երբ Իր գործակիցները ձախողին: Ի՞նչ կը պատահի, երբ Իր փրկած, սրբած եւ կանչած կեանքերը անկում անկումի վրայ ունենան եւ իրենց տկարութեամբ եւ անհաւատարմութեամբ վրտանգեն Աստուծոյ գործին եւ ծրագրներուն յաջողութիւնը: Աստուծոյ գերիշխանութիւնը կըրնա՞յ ի յայտ գալ հակառակ Իսրայէլի եւ եկեղեցիին անհաւատարմութեան: Թուոց գիրքը աննախընթաց լոյս մը կը նետէ այս հարցին վրայ: Մինչ ուշադիր կը քննենք ներշնչեալ Գիրքին էջերը, կը նշմարենք Աստուծոյ շարժումները: Նա վերէն շարունակ կը հետեւի Իր գործակիցներուն ամէն մէկ քայլափոխին ու Իր անսպառ ուժերովը կը գործէ, կը կրթէ, հետզհետէ դաստիարակելով կը սրբազրէ, ի վերջոյ՝ եւ ամէն բանի հակառակ՝ յաղթելու եւ իշխելու հա. մար: ...Յայնժամ կը լուսարանուինք, եւ մեր անձկալից սրտին հանգչեցնող մեղմ ձայն մը, խրախուսիչ աւետիս մը, թրթռուն երաժշտութեան մը պէս կը հնչէ. Աստուած չպարտուիր:

Կ'արժէ նաեւ զիտել որ Աստուծոյ գործելակերպը որքա՛ն կատարեալ է: Ո՛չինչ զինքը անակնկալի կը բերէ եւ զԱ.յն անպատրաստ կը գտնէ: Ո՛չ մէկ տկարութիւն, ո՛չ մէկ աչառութիւն կամ սխալ: Ո՛չինչ, միջ մէկ անձ կամ կապ կրնան խախտել մեր բացարձակ կատարելութիւնները: Տէրը նոյնիսկ Մովսէսի չխնայէր երբ նա կը շեղի իր գիծէն: Միւս կողմէն Իր ամենատես աչքերէն բնաւ չեն վրիպիր Իսրայէլի հազարաւորներուն մէջ ծածկուած Իր մի քանի հաւատարիմները: Յետեւ եւ Քաղէբ կը հաւատային թէ Աստուած բաւարար էր իրենց բոլոր կեանքին եւ իրենց բոլոր գործունէութեան համար, եւ է՛ն յուզիչ եւ հանդիսաւոր պարագայի մը մէջ ալ, երբ Աստուծոյ սրբութիւնը Իր անդիմադրելի գօրութիւնը կ'սկսի զգացնել, Տէրը կը յիշէ այս երկուքը, կը պահէ անոնց անձերը եւ կը վարձատրէ զանոնք իրենց հաւատքին ի պատասխան: Իսկ Իր սրբութիւնը չխնայէր երբեք անոնց, որոնք կը խորհին ոտնակոխել Իր պատիւն ու շահերը, ու հոս ալ Աստուծոյ կատարեալ համբերութիւնը միայն այն ատեն պատահասի եւ անէժքի կը փոխուի, երբ Նա տեսնէ որ ա՛լ յոյս չկայ խոտասիրտ մեղաւորէն, երբ ալ խորտակուած է շնորհքի նուրբ բաժակը եւ ա՛լ պլպլուն պատրոյզը մարած է անոր խղճին մէջ...

X

Աստուած տագնապի եւ անտանելի դժուարութեանց շրջանները կը գործածէ զմեզ քայլ մը եւս առաջ մղելու մեր կեանքին եւ մեր գործին մէջ: Մինչ կը սահինք ժամանակի հոսանքն ի վար, տագնապները իբր կատաղի կոհակներ զմեզ վեր կը վերցնեն բարձրացնելու եւ հասցընելու Աստուծոյ խոստմանց, որոնք մեր բնականոն կեանքի հասողութիւնէն աւելի վերերն են կախուած: Այս տագնապներու ընթացքին մեր Աստուծոյ հանդէպ բռնած դիրքն է որ կ'որոշէ ապագայի յաջողութիւնը: Երկճիղ ճամբան է որ կը բացուի անհատին կամ եկեղեցիին առջեւ, կարելի պիտի ըլլայ պատուել զԱստուած, հաւատքով ընտրելով իր ճամբան:

Կադէսի տագնապը (crisis), միշտ պատրաստ է անհատին կամ եկեղեցիին առջեւ: Քանանը մեր առջեւն է իր ամբողջներով եւ յաղթահասակ բնակիչներով եւ Տէրը գիտէ թէ որքա՛ն իրաւական են այդ դժուարութիւնները այսօր իր զաւակներուն համար: Տակաւին համարածեալ Փրկչին կոչը որոշ է, «Գացէք, աշակերտեցէք», զրաւեցէք զանոնք Քրիստոսի համար: Եւ ահա արդէն երկճիղ ճամբան կը բացուի մեր առջեւը:

Ա. Կարելի է սոսկալ դժուարութիւններուն առջեւ եւ հոս քաշուիլ անկարելի և անդիմադրելի սեպելով արգելքները, այսինքն զԱստուած տեսնելով դժուարութեանց շուքին մէջ:

Այս էր տաւը լրտեսներուն ըրածը:

Բ. Կարելի է լման գիտակցիլ դժուարութիւններուն, բայց տակաւին զանոնք տեսնել Աստուծոյ լոյսին մէջ եւ ընդ առաջ վազել Աստուծոյ «գորութիւն առած ամբողջներ քակելու», վստահելով Սուրբ Հոգւոյն ամենակարող գորութեան:

Այս էր Քաղէթի եւ Յեսուի ըրածը:

Անտարակոյս հոս անդիմադրելի հրաւէր մը կայ ընդհանուր միախոնարութեան: Բայց ես կը նախընտրեմ սեղմել շրջանակս և գրել Հայ Աւետարանական եկեղեցիներուն, Աստուծոյ դատակներուն Ֆրանսայի մէջ կամ այլուր:—

Սիրելիներս, կը գիտակցի՞նք լիովին Աստուծոյ մեղի ուղղած կոչումին: Մեր բոցներուն հիմնադրատակ կործանելէն յետոյ, ինքզինքնիս կը դռնենք աշխարհի շատ մասերուն մէջ, բայց երեսութիւն փոխորդիկի միջոցաւ որովհէտ յափշտակուած ճիւղեր, բայց իրականութեան մէջ, յոսուած ճիւղեր որոնք «կը մաքրուին որ ալ աւելի պտուղ բերեն»: Այս սփիւռքին պատճառած

բազմաթիւ աննպաստ կէտերուն լաւ ծանօթ ենք բոլորս ալ, եւ իւրաքանչիւր գիտակից ոք կըրցածը կ'ընէ մեծ վերքը փաթթելու: Սակայն մեզի քրիստոնեաներուս համար հարկ է թափանցել ազէտին խորը ծածկուած Աստուծոյ ծրարարին: Թէ Աստուած նպատակ ունի գործածել այս պոյսփիճակն ալ հոս հոն ցրուած հաւատացեալները իրենց գտնուած շրջանակներուն մէջ գնելով «Իր Քրիստոսի անուշ հոտը» վկայելու Անոր յաղթական կեանքին գնացքին: Այս կերպով Աստուած մեր շուրջը ստեղծած է բազմաթիւ դժուարութիւններով լեցուն Քանան մը եւ զմեզ կը կանչէ Իրեն համար զրաւելու զայն:

Ո՛հ, եթէ միայն Սուրբ Հոգին մեր բոլորիս էութեան մէջ հրավառէր այս կոչումին գիտակցութիւնը: Եթէ միայն գիտնայինք որ լոկ իբր գաղթական ժողովուրդ մը ապրուելու եւ գէշ ազէկ դիրք մը շինել չէ մեր կոչումը: Եթէ միայն հաւատայինք որ Աստուած կը հաճի աշխարհի մէջ «տկար եւ ցածագգի» սեպուածներն ընտրել իբր Իրեն գործակից, եւ եթէ միայն գիտնայինք որ «մեր հոգէ ամաններուն մէջ կրած զանձը Յիսուս Քրիստոսի անձովը տալ է «մեր կոչումը զԱյն տանելով իբր լոյսը եւ կեանքը մահամերձ մարդկութեան...: Եթէ միայն Երեմիայի ոսկոր լափող կրակն ու Պօղոսի ստիպող սէրը լեցնէին մեր սրտերը:

Արդ, ինչ որ ալ եղաւ մեր անցեալի վիճակը, ժամանակն է մեզի գիտակցելու այս կոչին, որ չըլլալ թէ մեր կոչումը եւ ընտրութիւնը վերադիցնենք»: Եւ երբ կը հասնինք այս կէտին, երբ մեր աչքերը կը յառենք մեր իսկական նւապատակին, եւ կը տեսնենք զԱստուած Իր իսկական լոյսին մէջ, ալ կը սորվինք իրենց վայել տեղը տալ կեանքի երկրորդական հարցերուն որոնք ցարդ կաշկանդեցին մեր յառաջդիմութիւնը: Ա՛լ չենք զանդատիր, չենք ձուլանար, չենք թերահաւատիր ու չենք վախնար: Ո՛չ ալ կը վերադառնանք զԱստուած մեր սրբապղծութիւններովը, այլ կը մաքրենք մեր անձերը, մեր զրդապատճառները, մեր գործերը, մեր տոռները, մեր պաշտամունքը: Կը հետեւինք Աստուծոյ ցոյց տուած լոյսին եւ կը միանանք Քաղէթի եւ Յեսուի մարտակոչին:—

Աղէ՛, ելլենք ու ժառանգենք զայն,

Աղէ՛, գրաւենք հայ ազգը Յիսուսի համար:

Գրաւենք մեր շրջանակը Աստուծոյ սիրոյն: Այս վերջին ժամանակներուն մէջ կ'զգանք որ օրերը յղի եւ կարճ են, չվարանինք մեր անձերը յօժարակամ գնելու գոհի սեղանին վրայ:

Մէկզի՛, բոլորովին մէկզի, ամէն անձնասիրութիւն եւ սնամէջ պատճառարանութիւններ: Գործելու եւ ապրելու միակ դրդապատճառ մը ունենաւք, եկեղեցիին լրիւմը՝ Աստուծոյ փառքին համար:

Զինուորուինք լուսոյ գէնքերով, եւ հաւատքին վահանը ձեռք առնենք հետեւելու մեր հաւատքին Առաջնորդին:

Անոնք Գառնուկիւնն են և Անոր ետեւէն կ'երթան ուր որ Ան կ'երթայ:

Փարիզ

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

ԿԵՆՍՍԳՐԱԿԱՆ

ԿՈՄՍ ՅԻՆՅԷՆՏՈՐՅ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՅ ԱՒԱԳԵՐԷՑԸ

ԵՒ ԱՆՈՆՅ ՆՈՐ ԳԱՂՈՒԹԸ

Եղբայրական միութիւնները օրկանական կազմակերպութիւն մը ունէին. մեր առաջին յօդուածներէն միոյն մէջ տեսանք անոնցմէ առաջինը՝ Հերնանդը որ մեծ ընտանիքի մը հանդամանքն ունէր. մեծ չափով նոյն վիճակն ունէին նաեւ ետքը կազմուած միութիւնները կամ համայնքները. անոնցմէ իւրաքանչիւրին զբոլոր կը կենար երէցը, որ համայնքը կը կառավարէր իբր անոր հայրը: Սակայն համայնքներն ալ անշատ անշատ ձգուած չէին, հապա մէկմէկու միացած էին սինօգներու (համաժողովներու) եւ «աւագերէցին» միջոցաւ: Ասիկա ներկայացուցիչն ու առաջնորդն էր բոլոր համայնքներուն. կը հոկէր որ անոնք չհեռանան իրենց նպատակէն եւ օրէ օր աւելի մեծ եռանդով ձգտին իրենց մեծ կոչմանը իրազործութիւն: Ան ճանչնալու էր բոլոր համայնքներուն եւ անոնց մէջ դտնուող ամէն մէկ անդամին հոգեւոր վիճակը եւ քահանայական աղօթք ընելու անոնց իւրաքանչիւրին համար:

Այդ կարելի էր սկզբնական շրջանին, բայց որքան բազմացան եղբայրական միութիւնները եւ բարձրացան անոնց անդամներու թիւը, այնքան աւելի անկարելի դարձաւ այդ պարտականութեան կատարումը մարդկային էակի մը կողմէ: Այս դժուարութիւնը տեսաւ ամենէն աւելի այն ատենուան աւագերէցը՝ Լէոնհարտ Տօպըր, և եղբայրական միութեան Լոնտօնի համաժողովին (14-23 Սեպտ. 1741) մէջ յայտարարեց թէ ինքը այլևս ի վիճակի չէ իր պաշտօնին վերաբերեալ պարտականութիւնները կատարելու,

եւ իր հրաժարականը ներկայացուց: Նոյն պաշտօնին համար ուրիշ անձ մը գտնելն ալ անկարելի եղաւ: Ուստի հաւաքուած եղբայրները եկան այն եզրակացութեան թէ հունաւոր մարդ մը չկրնար իրենց աւագերէցն ըլլալ, հապա միայն փառաւորեալ Փրկիչը, Որ Տէրն ու Դուռն է եկեղեցւոյն, եւ Որուն տրուած է ամէն իշխանութիւն երկնի ու երկրի մէջ: Համաժողովին (Միութեան ժողովին) անդամները մանկական վստահութեամբ աղօթեցին որ Ասիկա յօժարի ըլլալ եղբայրական համայնքներու Աւագերէցը, եւ մինչ Աստուծոյ խօսքին մէջ իրենց աղօթքին պատասխանը կը փնտռէին, հանդիպեցան հետեւեալ համարներուն. — «Իմ որդւոցս համար և իմ ձեռացս գործերուն համար Խնձի պատուէր տուէք» (Շապ. ԽԵ. 11): «Տէրոջը փառքը տունը լեցուցեր էր» (Եզեկ. ԽԳ. 3): «Ահա ես դուր կայներ եմ ու կը զարնեմ» (Յայտ. Գ. 20):

Այս համարները անոնք նկատեցին իբր ապացոյց թէ Յիսուս կ'ուզէ իրենց Աւագերէցն ըլլալ, եւ բերկրեցան մեծ ուրախութիւնով: Սոյն տարուան Նոյ. 13ին այս բանը յայտարարուեցաւ եղբայրական միութեան պատկանող բոլոր համայնքներուն, որոնք այդ օրուրէն մինչեւ հիմա Քրիստոսը կը ճանչնան իբր իրենց Աւագերէցը, եւ Նոյ. 13ը կը տօնեն հանդիսաւորապէս:

Բայց ասով Յինցէնտորֆ և եղբայրները բնաւ ըսել չէին ուզեր թէ իրենց միութեան պատկանողները բոլորն ալ Աստուծոյ զաւակ են և անկէ դուրս հաւատացեալ գոյութիւն չունին: Յինցէնտորֆ ըսած է, «Մենք բոլորովին մոլորութեան մէջ պիտի ըլլայինք, եթէ սա համոզումն ունենայինք, թէ կրնայ կազմուիլ այնպիսի եկեղեցի մը, ուր չպիտի գտնուին քանի մը հիւանդներ, քանի մը մոլորեալներ, եւ վերջապէս քանի մը մարդիկ, որոնք կրնան որո՞մ նկատուիլ»: Գարձեալ անոր խօսքն է, «Եթէ Յիսուսի թագաւորութիւնը Մորավեան եկեղեցւոյն մէջ սահմանափակուի, ...այն ատեն գոյութիւնէ կը դադրի Յովհաննու ԺԷ. գլխուն մէջ Փրկչին ըրած կտակը... Ով որ վշտի Մարդն ունի, մեզի չափ խելացի է, կրնայ մեր ապրումն ունենալ եւ թերեւս աւելի բարձր աստիճանաւ մը քան թէ մենք: Յիսուս Քրիստոսի իրական եկեղեցին անտեսանելի է եւ ամբողջ երկրի վրայ ցրուած: Բայց կան նաեւ տեսանելի եկեղեցիներ. այս անունով կըրնանք կոչել նոյնիսկ այն երկու կամ երեք անձերը, որոնք Անոր անունովը հաւաքուած են»: Այս մի քանի խօսքերէն մենք բոլոր հայ հաւատացեալներս շատ բան կրնանք սորվիլ:

Եղբայրական միութիւնը այսպէս խորհելով հանդերձ կրնար հաւատալ թէ Քրիստոս իրենց Աւագերէցն է եւ իրենց հետ մասնաւոր բարեկամութիւն մը հաստատած: Քանզի ինչպէս ամէն մէկ անհատ հաւատացեալ՝ նոյնպէս նաեւ ամէն մէկ եկեղեցի իրաւունք ունի ըսելու, «Թէեւ ես չեմ կրնար եւ չեմ ուզեր մէկը զրկել Անկէ, թէեւ չեմ նախանձիր երբ մէկը կը վայել զԱյն, — վասնզի Անոր անհուն սէրը կրնայ յագեցնել բոլոր քրիստոնեաներու սիրոյ պապական ալ — սակայն ամէնքէն աւելի ես կ'ըզամ զԱյն իմս ընել, իմ Բարեկամս, իմս է եւ ես Անորը»: Եւ եղբայրական միութիւնը աւելի մեծ իրաւունք ունէր զայս ընելու. քանզի հայրենիքի ու ազգի կապը չէր որ զիրենք կը միացնէր, հապա Փրկչին հանդէպ իրենց ունեցած տաք սէրը, որ զիրենք իրենց երկիրներէն ու ժողովուրդներէն բաժնած ու իրարու քով բերած էր: Յինցէնտորֆ ըսած է, «Եթէ մարդ եկեղեցւոյ մը անգամնեւ իրեն հարցնէ թէ ինչո՞ւ անոնք կը նախընտրեն կօշկակարութիւն ու դերձակութիւն ընել հոս եւ ոչ թէ իրենց ծննդավայրին մէջ, եւ անոնք իբր պատճառ բերեն իրենց սէրը հանդէպ Փրկչին, այդ պարագային անոնց չենք կրնար զլանալ "Փրկչին ժողովուրդը" տիտղոսը»:

Այս հաւատքը՝ թէ Խաչեալն է եղբայրական միութեան Աւագերէցը, մղեց զանոնք աւելի և ուանդուն յարարերութիւն մշակելու բոլոր հաւատացեալներու հետ, քանզի անոնք չէին ուզեր զիտակցօրէն բաժնուած մնալ Աստուծոյ ճշմարիտ մէկ զաւկէն՝ ո՞ր յարանուանութեան ալ պատկանէր անիկա: «Բանբեր»ի Մարտի ու Ապրիլի թիւերուն մէջ արդէն գրած ենք թէ Մորավեան եղբայրութիւնը կը փափաքէր կապ հաստատել բոլոր իրական քրիստոնեաներու հետ, գրած ենք նաեւ թէ ինչպէս անիկա այդ նպատակաւ իր ճիւղերը տարածեց Եւրոպայի ու Ամերիկայի շատ մը կարեւոր կեդրոններուն մէջ: Լօնտոնի 1741ի համաժողովէն յետոյ այդ մասնաճիւղերուն վրայ աւելցան շատ մը նորեր ալ: Այսպէս՝ Շրէլզիոյ մէջ հաստատուեցան (1742) երկու համայնքներ՝ «Շնորհաց լեռը» եւ «Շնորհաց ազատեալը» կոչուած, որոնց շուտով ընկերացաւ երրորդ մըն ալ: Բրուսիոյ փիլիսոփայ թագաւորը՝ Մեծն Ֆրեաէրիք, դեռ նոր միացուցած էր այդ երկրամասը Հոլանդիերէան գահուն, եւ շատ կը փափաքէր բարձրացնել անոր տնտեսական մակարդակը: Ուստի գնահատելով աշխատասիրութիւնը Մորավեան եղբայրներու — որոնք որքան բարեպաշտ հաւատացեալներ, նայնքան ալ ճար-

պիկ արհեստագործներ ու գիւղատնտեսներ էին — անոնց արտօնեց Շրէլզիա դաղթելու եւ այդ երեք եղբայրական համայնքները հաստատելու: Չանոնք իր այդ նոր նահանգներուն աւելի պինդ կապելու դիտումով անոնց խղճի կատարեալ ազատութիւն շնորհեց եւ թուլատրեց նոյնիսկ իրենց եկեղեցական մասնաւոր սահմանադրութիւնն ունենալ եւ ազատօրէն ընտրել իրենց քարոզիչները՝ անկախ լուսորակա եկեղեցւոյ վարչութիւնէն:

Այդ ատենները Յինցէնտորֆ Ամերիկա կը գտնուէր: Իր Գերմանիա վերադարձին գտաւ թէ եղբայրութեան տրուած այդ ընդարձակ իրաւասութիւնը կը նշանակէր Լուսերականութենէ բաժանում, որուն հակառակ էր ինքը: Շիտակ է թէ ան կը փափաքէր որ Մորավեան եղբայրական միութիւնը իր ոգւոյն եւ ուղղութեան համապատասխան սահմանադրութիւն, կազմակերպութիւն ու գործելակերպ ունենար, եւ ազատութիւն՝ պատրաստելու եւ ընտրելու իր հովիւները, բայց իր նպատակը չէր բաժանում: Ընդհանրապէս իր բազմաւոր էր որ եղբայրութեան պատկանող իւրաքանչիւր հաւատացեալ միւս իր լուսերական կամ բարեկարգեալ եկեղեցւոյ մէջ ու հոն օրհնութիւն ըլլար. կ'ուզէր որ եղբայրակոն միութիւններու համայնքները գտնուէին հսկողութեանը պետական եկեղեցւոյ վարչութեանը, որ իրաւունք ունենալու էր քննելու նաեւ եղբայրութեան մէջ գործող քարոզիչները:

Յինցէնտորֆ այս տեսութիւնը պարզեց իր եղբայրական միութեան մէկ համաժողովին մէջ, եղբայրները իրեն համամիտ գտնուեցան, ուզեցին Շրէլզիոյ մէջ գործել լուսերական եկեղեցւոյ հսկողութեանը տակ: Բայց փիլիսոփայ որ հակառակ էր եղբայրութեան, յայտնեց թէ չուզեր ունէլ գործ ունենալ Մորավեան եղբայրներու հետ: Անոնց գործելակերպը համակրելի չէր իրեն:

Ասով բաժնուեցաւ Մորավեան եղբայրական միութիւնը լուսերական եկեղեցիէն եւ անկախ եկեղեցի մը եղաւ, նախ Շրէլզիոյ եւ ապա ամէն տեղի մէջ: Բայց ատոր յանցանքը չիմար Յինցէնտորֆի վրայ, որ շատ հեռի էր նոր ազանդ մը հիմնելու մտադրութիւնէն, ինչպէս յաճախ նշմարեցինք այս յօդուածաշարին մէջ: Բաժանումը յառաջ եկաւ հակառակ Յինցէնտորֆի կամքին, պարագաներու ստիպման տակ՝ զխաւորաբար պետական եկեղեցիներու թուլութեան ու նեղմտութեան պատճառաւ: Ասկէ զատ՝ ինչպէս բողոքականութեան բաժանումը կաթողիկոսութենէ Աստուծոյ տնօրէնութեամբն էր ու օրհ-

նութիւն եղաւ, նոյնպէս ալ Մորավեան եղբայր-
ներու անկախութիւնը կամքովն էր Անոր՝ Որ
Տէրն ու Գլուխն է եկեղեցւոյն: Բողոքականու-
թեան շրջանակին մէջ պէտքը կար այդպիսի
եկեղեցւոյ մը, որ կը ջատագովէ սա ճշմարտու-
թիւնը թէ՛ մեր գիտութիւնը որուն վրայ կը հիմ-
նուի վարդապետութիւնը, միայն փոքր բան մըն
է, եւ սէրը աւելի կարեւոր է քան թէ բոլոր գի-
տութիւնները: Ահա Մորավեան միութիւնը կը
պաշտպանէ եւ կը խնամէ այդ եղբայրական սէ-
րը եւ անկէ բղխող եղբայրական հաղորդութիւ-
նը: Մինչդեռ այդ օրերու բողոքական պետական
եկեղեցիները քրիստոնէական այդ մտերիմ յա-
րաբերութեան ուշադրութիւն չէին ընել, վար-
դապետական հակաճառութիւններու մէջ ընկըղ-
մած էին եւ չէին մտաբերել թէ իրենք անգամ-
ներն էին Աստուծոյ ընտանիքին, անոնց մէ-
ջը մտաւ քոյր մը, որ նոր վարդապետութիւն
մը չըբերէր, նոր աղանդ մը չհիմնէր, հապա կ'ը-
սէ, «Հաշտուեցէք իրարու հետ, եւ մէկգմէկ սի-
րեցէք, ինչպէս Քրիստոս պատուիրած է մեզի՝
մեռնելու առեւ, եւ ձեռք ձեռքի տուած՝ ջանա-
ցէք անմահ հոգիներ շահիլ Փրկչին համար»: Եւ
անուրանալի է որ այդ տեսակէտով մեծ օրհնու-
թիւն եղած է Մորավեան եղբայրութեան ե-
կեղեցին: Անիկա զօրացուցած է եղբայրական
սիրոյ կապը եւ հսկայ գործ տեսած՝ միսինա-
բութեան միջոցաւ շատ հեթանոսներ Քրիստոսի
ոտքը խոնարհեցնելով:

X X X

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՄԱՌԻԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Մառի պէտք էր շատ երջանիկ ըլլար: Լաւ
ծնողք մը ունէր եւ կը բնակէր մեծ պարտէզով
շրջապատուած գեղեցիկ տան մը մէջ. շատ մը
խաղալիքներ ունէր, որովհետեւ իր բոլոր ազ-
գականները չէին մոռնար, ոչ ծնունդին եւ ոչ ալ
իր տարեկարծին նուէրներ տալ, եւ տակաւին
երջանիկ չէր:

«Զեմ գիտեր ինչո՞ւ», ըսաւ օր մը իր Լուսի
հօրաքոյրը. «Մանուկները աւելի Արշալոյսին հետ
խաղալ կը սիրեն քան թէ ինծի: Անոր պուպրիկ-
ները իմինէս աւելի աղուոր չեն եւ զրեթէ խա-
ղալիք չունի. ինքն ալ գեղեցիկ չէ, մազերը ո-
ղորկ են, եւ աղուոր ալ չի հազուիր, եւ իրենց
պարտէզը բաղդատմամբ մերինին որքան պզտիկ
է»: Հօրաքոյրը շատ կը սիրէր իր եղբօր աղջի-

կը, եւ կը ցաւէր զայն տխուր տեսնելուն, եւ
միւս կողմէն իրեն վիշտ կը պատճառէր ըսել
իր առանձնութեան պատճառը: «Գիտե՞ս, սիրե-
լիս», ըսաւ հօրաքոյրը, շոյելով անոր գանգուր
եւ մետաքսանման մազերը, «Մէկը անհաճելի
չկրնար ըլլալ ողորկ մազեր ունենալուն համար.
մարդ չի սիրուիր իր գեղեցկութեան համար,
բայց կը սիրուի իր բարութեանը համար: Շատ
հաւանական է որ Արշալոյս անձնասէր չէ, ան
կը թուաարէ իր պուպրիկը եւ խաղալիքները
առանց վերապահութեան: Երբեք դուն լսեցի՞ր
որ կ'ըսէր, այս գնդակին մի գպչիք, իմս է, եւ
կամ, այս խաղը խաղանք՝ ես շատ կը սիրեմ,
ու թէ, պէտք է ընէք ինչ որ ես կ'ուզեմ, քանի
որ մեր տան մէջ էք»:


Մառի ծոցը գլուխը: Ի՛նչ, հօրաքոյրը լսած
էր այս նախադասութիւնները. եւ տակաւին ան
չէր գիտեր ամէնը: Հօրաքոյրը չէր գիտեր թէ
անցեալ օր ինքը գաղտնի կերած էր շաքարե-
րը փոխանակ իր պզտիկ բարեկամներուն ալ հը-
րամցնելու. եւ թէ ինք պատժած էր Պողոսիկը,
որովհետեւ զաւաթ մը կոտրած էր: «Հօրաքոյր,
կը խորհի՞ս թէ պզտիկները պիտի սիրեն ինծի
հետ խաղալ, եթէ անձնուէր ըլլամ», աւելցուց
գլուխը բարձրացնելով: «Քեզ չեմ կրնար վըս-
տահացնել աղուորս, սակայն գիտեմ որ անձ-
նասէրները քիչ բարեկամ ունին, եւ նոյնքան եր-
ջանիկ չեն որչափ որ են անձնուէրները»: «Լաւ,
ըսաւ որոշումով մը, դուն չես գիտեր եւ ոչ ալ
ես, բայց պիտի փորձեմ թէ՛ անձնուէր ըլլալով
բարեկամ պիտի շահի՞մ»: Իր խոստումը պահեց:
Ամէն անգամ որ խաղալու կ'երթար, կ'ըսէր,
«Որո՞ւնն է կարգը»: Մորվեցաւ խաղալ այն խա-
ղերը որ իր ընկերները կը նախընտրէին և զար-
մացաւ հասկնալով թէ անոնց ընտրած խաղերը
իր սիրած խաղերուն չափ հաճելի էին. դարձ-
եալ հասկցաւ թէ բաժնուած շաքարը աւելի
համ ունէր քան թէ առանձին ու գաղտուկ կե-
րածը:

Շուտով մանուկները սկսան խումբով իրեն
տունը գալ, Արշալոյսն ալ անոնց հետ: Այլեւս
բնաւ պէտքը չունեցաւ խնդրելու ընկերներէն
որ զան եւ իր հետ խաղան:

Թարգ. Ֆրանսերէնէ

ՊԶՏԻԿԵՆՐՈՒ

ԲԱՐԵԿԱՄՈՒՅԻՆ



«ՄԱՆԿԱՆՑ ՈՒ ԿԱԹՆԿԵՐ ՏՂԱՅՈՑ
ԲԵՐՆԷՆ»

Ռօպէր անունով աստուածավախ պգտիկ աւ-
ղայ մը կար: Օր մը իրեն բարեկամ մեծ մարդ
մը զայն իր տունը հրաւիրելով ըսաւ, «Պգտիկ
բարեկամս, այս կիրակի օր մեր տունը եկուր
զիս տեսնելու՝ ինչու որ կիրակի օրը ամբողջ
տուն պիտի գտնուիմ»:

Մանուկը զարմանքով հարցուց, «Կիրակի
ամբողջ օրը տուն կը կենաք»:

«Այո՛, այո՛», պատասխանեց մարդը, «եւ ին-
չո՞ւ կը զարմանաս ասոր վրայ»:

«Կը զարմանամ անոր համար որ շատ գէշ
բան մըն է կիրակի օրը եկեղեցի չերթալ երբ
մարդ կրնայ երթալ. ես երկու անգամ ժողովա-
րան կ'երթամ կիրակի օրը, նոյնպէս ալ հայրի-
կըս», ըսաւ Ռօպէր:

Մարդը չպատասխանեց: Իր խիղճը սկսաւ
զինք յանդիմանել այս մանկան քանի մը խօս-
քերովը: Յաջորդ կիրակի ինքն ալ ժողովարան
գնաց եւ իր կինը զարմացաւ երբ անոր ըսաւ
թէ կուզէ այլևս ամէն կիրակի կանոնաւորապէս
ժողովարան երթալ: Եւ այնպէս ալ ըրաւ:

X

«Մայրիկ», կ'ըսէր օր մը պգտիկ աղջիկ մը,
«Կիրակնօրեայ զպրօցի վարժուհին» ըսաւ թէ
Աստուած մեզ այս աշխարհին մէջ դրած է քիչ
մը ժամանակուան համար՝ որպէսզի կարենանք
աւելի լաւ աշխարհ մը երթալու համար պատ-
րաստութիւն տեսնել: Բայց մայրիկ, ես մէկը
չեմ ճանչնար որ կը պատրաստուի: Դուն պատ-
րաստութիւններ կ'ընես քանի մը օր օգափոխու-
թեան երթալու, Մօրաքոյրս Լուիզ կը պատրաստ-
ուի հոս գալու, բայց երկինք երթալու պատ-
րաստութիւն չէք տեսներ: Եթէ երկինք երթալ
կ'ուզէք, ինչո՞ւ չէք պատրաստուիր»:

«Բու Աստուածդ դիմաւորելու պատրաստուէ:

X

Յովհաննէս անունով պգտիկ աղայ մը կար
որ կանոնաւորապէս կիրակնօրեայ զպրօց կ'եր-
թար: Օր մը հայրը զայն տեղ մը պրկեց անոն
լիք դրամ մը գանձելու:

«Յովհաննէս՝ կ'ըսես թէ հայրիկ այսօր բան
մը ծախու պիտի առնէ՝ եւ անոր համար այս
դրամին պէտքը ունի: Շիտակը այդպէս չէ բայց
այդպէս ըսելով դրամը աւելի դիւրաւ կուտան»:

«Ո՛հ, հայրիկ, ես չեմ կրնար սուտ խօսիլ,
պատասխանեց աղան. «Կիրակնօրեայ զպրօցի

ուսուցիչս ըսաւ թէ Աստուած մեր ամէն խօս-
քերը կը լսէ եւ թէ սուտը Անոր ատելի է, ոչ
հայրիկ, ես չեմ կրնար սուտ խօսիլ»:

X

Պգտիկ աղջիկ մը մայրիկին հետ կը խօսէր
մանուկ ազգականի մը մահուան առթիւ:

«Մայրիկ, Ալպէր երկինք գացա՞՞մ է»:

«Կը խորհիմ թէ այո՛, ըսաւ մայրը, «ո-
րովհետեւ նա բարի տղայ մըն էր, հնազանդ, եւ
երբեք գէշ խօսքեր չէր խօսիր»:

«Եւ անոնք որ գէշ խօսքեր կը խօսին, մայ-
րիկ, անոնք ո՞ւր կ'երթան երբոր մեռնին»:

«Պգտիկս, Ս. Գիրքը մեզի կ'ըսէ թէ ա-
նոնք դժոխք կ'երթան»:

«Մայրիկ», պատասխանեց աղջիկը, «ես
վախնամ թէ դուն դժոխք պիտի երթաս, դուն
ալ, հայրիկս ալ, ինչու որ շատ անգամներ ձեր
հայհոյելը կը լսեմ, եւ ես գիտեմ որ հայհոյու-
թիւնները գէշ խօսքեր են»:

Հայրը, որ այս խօսակցութիւնը մօտիկ ը-
րած էր, մանկան այս դատապարտութիւնը լը-
սելով կայծակնահար եղաւ, եւ վայրկեան մը
մտածելէ յետոյ, իր կնոջ դառնալով ըսաւ,

«Իմ պգտիկ աղջիկս այլևս երբեք զիս այս-
պէս յանդիմանելու պատճառ պիտի չունենար»:

Եւ հայրիկը իր խօսքը պահեց: Այն օրէն
սկսեալ ոչ միայն այլևս չէր հայհոյեր՝ հապա
նա անկեղծօրէն իր մեղքերուն թողութիւնը
փնտռեց եւ փրկութիւն գտնելով կրցաւ Տէր Յի-
սուս Քրիստոս Փրկչովը ուրախանալ:

Սիրելի տղաս, այս քանի մը տարեկիցնե-
րուդ այս վկայութիւնը քու սրտիդ խօսեցնել
սուր: Թող անոնք չանցնին որպէս անապատին
մէջ կամ պարապութեան մէջ հնչեցող ձայն մը
հապա սրտիդ մէջ արձագանգող քաղցր ներդաշ-
նակութիւն մը որմէ դուն եւս օգտուիս: Ահա
տղաքը Տէրոջը ժառանգութիւնն են: Անոր զոր-
ծակիցները՝ Տէրոջը բնառնութիւնը: Տէր Յի-
սուս քու լիզուիդ ալ պատեղները թող վայելէ:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՍ ՄԸ

.....

Ու Նէեման գնաց իր տէրոջը պատմեց, ու
ըսաւ, Իսրայէլի երկրէն եղող պգտիկ աղջիկը
այսպէս ու այսպէս խօսեցաւ: Դ. Թագ. Ե. 4



ՊԱՏԱՆԵԱՅ

ԵՍ ԱՂՕԹՔ ԸՆԵԼ ՉԵՄ ԳԻՏԵՐ

Կը պատմուի թէ Հոլանտացի ազարակապանի մը մօտ աշխատող Հօթէնթօցի մը գինեմուլութեան գերի եւ այնքան անզգայ ու անգութ դարձած էր՝ որ ամենուն համար սարսափի եւ զգուանքի առարկայ մըն էր։ Օր մը այս թշուառ մարդը գետի մը եզերքը եկաւ արբած վիճակի մէջ։ Գետին հոսանքը արագ էր եւ լողալը վտանգաւոր։ Իր գինով վիճակին մէջ հագիւ կըրցաւ խելքը բաւականաչափ գործածել ու վտանգը տեսնել։ Եւ Հիամարձակելով լողալ՝ գետեզերքը պառկեցաւ տիմար եւ սրանեղ։ Այսպէս, վայրի զազանի մը նման ժամեր ամբողջ գետինը պառկած մնաց մինչեւ որ ուղեղին գինիի շոգին ցնդեցաւ, որմէ յետոյ նա լուրջ խորհրդածութիւններ ունեցաւ։ Երկար ատենէ ի վեր պարտականութեան ձայնին, նախախնամութեան ազդարարութեանց եւ Աւետարանի կոչերուն հանդէպ խուլ գտնուած էր։ Նա տարիքը առած մեղաւոր մըն էր, հայհոյանքի, կոխերու, խաղի եւ անառակութեան գերի դարձած...։ Խորհեցաւ թէ իր կեանքը աւելի արագ կ'անցնէր քան իր ոտքին տակէն վազող գետին ջուրերը, եւ ինչ պիտի ըլլար իր վիճակը երբ նա յաւիտենականութեան ովկիանոսին մէջ մտնէր։ Աստուծոյ շնորհքը այս ժամուն կրկնակի հարուածներով զարկաւ այս խեղճ սեւամորթին սրտին դուռը եւ ներքին ճամբաներով հասկցուց անոր թէ ուրիշ ոչինչ կը մնար ընել, բայց միայն ինքզինքը աստուածային առաջնորդութեան եւ ողորմութեան բաղկաց մէջ նետել։

Խորհեցաւ թէ ինք աղօթք ընել չէր գիտեր, եւ սուն վերադառնալով իր աէրոջմէն խնդրեց, «Ինծի աղօթք ընել սորվեցուր»։

Բայց միայն անունով քրիստոնեայ տէրը իր ծառայէն աւելի բարեպաշտութիւն չուէր, ուստի անոր այնպիսի խրատներ տուաւ որոնք անօգուտ էին կամ կատարելը անկարելի։ Այսու իր տանը մէջ Սուրբ Գիրքը կը կարգացուէր եւ քանի մը օր յետոյ ծառան լսեց փարիսեցիին եւ մաքսաւորին պատմութեան ընթերցումը։

«Երկու մարդ ելան տաճարը տըմք ընելու, մէկը փարիսեցի ու միւսը մաքսաւոր...»։

«Նայինք», ըսաւ Հօթէնթօցին ինքնիրեն, «անշուշտ ինծի համար բաժին մը կայ ասոր մէջ»։

«Փարիսեցին կայներ էր եւ առանձին տնակէս աղօթք կ'ընէր, Ով Աստուած, շնորհակալ եմ քեզ»։

մէ որ ուրիշ մարդոց պէս չեմ, յափշտակող, անիրաւ, շնացող եւ կամ այս մաքսաւորին պէս»։

«Այս փարիսեցին արդար էր» գոչեց Հօթէնթօցին, «անիկա արդար էր, իսկ ես չար մէկն եմ։ Անոր աղօթքը ինծի համար չէ, երբեք ես այդ աղօթքը չեմ կրնար ընել...»։

«Եւ մաքսաւորը հեռուն կայներ էր», (Հօթէնթօցին տանը դռան ետեւն էր) «ու չէր ուզեր աչքն ալ երկինք վերցնել», (Հօթէնթօցին գետինին վրայ կծկտած գլուխը վար ծռած էր) «հա. պա իր կուրծքը ծեծելով (Հօթէնթօցիին կուրծքը հառաչանքներով լեցուն էր) կ'ըսէր, Աստուած, ողորմէ ինծի մեղաւորիս...»։

«Ահաւասիկ ինծի պէտք եղած աղօթքը», գոչեց նա. եւ կրկին ու կրկին կ'ըսէր ետանդով ու արցունքներով, «Աստուած, ողորմէ ինծի մեղաւորիս...»։ Արցունքներուն յաջորդեց ուրախութիւն, ու կ'ըսէր, «Հիմա ալլելու աղօթել գիտեմ...»։

Սիրտը ուրախութեամբ լեցուն էր ու չէր գիտեր որու պատմել զայն. ոչ ոք կ'ուզէր գինքը մտիկ ընել։ Եւ երբ նա գետեզերք կ'երթար, յաճախ իր անկեղծ լեզուով կ'աղաղակէր,

— «Դուք լեռներ, ժայռեր, ծառեր ու գետակներ, լսեցէք ինչ որ Աստուած ինծի ըրաւ, Աստուած ողորմեցաւ ինծի, այո՛, ինծի, որ մեծ մեղաւոր մըն էի...»։

ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ

ՅԻՍՈՒՍ ԿՈՒԳՈՅ

Վերջերս աշխարհի մէջ արագօրէն իրարու յաջորդող դէպքեր կան որոնք եթէ Աստուածաշունչի լոյսին տակ քննուին, արտակարգ կարեւորութիւն կ'ունենան ճշմարիտ քրիստոնեաներու համար, որովհետեւ անոնք հաստատօրէն եւ որոշապէս կը ցուցնեն թէ «վերջին ժամանակներու», մէջ կը գտնուինք եւ «քիչ մը ատենէն Ան որ գալու է պիտի գայ ու պիտի չուանայ», Եբր. Ժ. 37։

Այս դէպքերէն մին է աշխարհի զանազան մասերուն մէջ Հրէաներու դէմ ի գործ զրուած հալածանքը, որուն պատճառաւ Իսրայէլի ժողովուրդը վերջապէս իր աչքը պիտի դարձնէ Պաղեստին, հոն միայն գտնելով ազգային կեանքի մը նմանող պայմաններ մը կարելիութիւնը։ Իսկ մենք հաւատացեալներս գիտենք թէ մեր Փրկչին երկրորդ գալստեան մօտաւորութիւնը ցոյց տուող նշաններէն մին պիտի ըլլայ Հրէա ազգին Պաղեստին հաւաքուիլը։

Արդ, յայտնի է որ տարիներէ ի վեր Երրայեցիներուն ներգաղթը սկսած է դէպի Քանաւուն երկիրը, եւ հետզհետէ աւելի կարեւոր թիւերով անոնք իրենց հայրերուն երկիրը պիտի վերադառնան աշխարհի չորս կողմերէն: Սիօնական հանրաժանօթ շարժումը, որ պահ մը հեզմանքով դիտուեցաւ շատ մը Հրէա մեծահարուստներուն կողմէ, ասոնց ալ համակրութիւնը կը կը վայելէ այժմ, եւ Միացեալ Նահանգներու տնտեսական տագնապը, ինչպէս նաեւ կեղծոնական Եւրոպայի հակասեմական շարժումն ու հարստահարութիւնները պատճառ դարձած են որ անոնք իրենց աչքը յառեն դէպի Երուսաղէմ:

Գալով Պաղեստինի այժմու վիճակին, մեծ դրամապոետներ կը զրկուին հոն, եւ տնկադործութիւնն ու ոռոգումները յառաջ կը տարուին: Մեռեալ ծովը անբաւ հարստութեան աղբիւր մը կը նկատուի արդէն եւ Պաղեստին բօթաս եւ պրօմ կ'արտադրէ: Նարնջենիները կարեւոր տատարածութիւններ կը ծածկեն հոն:

Միւս կողմէ զուտ Հրէական թէլ Ավիվ քաղաքը կը մեծնայ ու կը զարգանայ տակաւ: Երուսաղէմի, Հայֆայի եւ Տիրեբիոյ արուարձաններուն մէջ հարիւրաւոր շինութիւններ կը բարձրանան անդադար: Յորդանան գետը մեծ թուրպիկներ կը դարձնէ եւ ելեքտրականութիւն կ'արտադրէ: Ճարտարարուեստներ կը ծաղկին ու տեւական գործ կը հայթայթեն հազարաւոր գործաւորներու: Երուսաղէմի Հրէա համալսարանը գիտութեան ու լոյսի վառարանն է անոնց: Հայֆա կարեւոր նաւահանգիստ մը կը դառնայ մօտ օրէն եւ արդէն աշխատութիւնները աւարտելու վրայ են: Երկաթուղի մը այս քաղաքը Մեռեալ ծովուն պիտի միացնէ. Իսկ Մուսուլէն Հայֆա երկարող խողովակ մը քարիւղ պիտի հոսեցնէ Պաղեստինի մէջ:

Այս բոլոր իրողութիւններուն առջեւ մենք չենք կրնար չխորհիլ թէ Աստուած մօտ ատենէն պիտի կատարէ Իր խոստումը:

«Տէր Եհովա այսպէս կ'ըսէ, Ահա եւ Իսրայէլի սրդիքը պիտի առնեմ այն ազգերուն մէջէն ուր որ զացին, ու զանոնք ամէն կողմէն պիտի ժողովեմ, ու զանոնք իրենց երկիրը պիտի բերեմ» Եզեկ. ԼԷ. 21:

«Եւ ձեզ ազգերէն պիտի առնեմ, ու ամէն երկիրներէն ձեզ պիտի բերեմ» Եզեկ. ԼԶ. 24:

«Երբոր այս ամէն բաները տեսնէք, զիտցէք որ մօտ է գոնեանք քով» Մատ. ԻԴ. 35:

«Այո, շուտով կուգամ եւ. Ամէն, եկուր Տէր Զիսուս» Յայտ. ԻԲ. 20:

ՕՐՍՏՅՈՐՏԻ ԽՄԲԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄԸ

(Մեր գիտողութիւնը)

Այս շարժումը որ արդէն Գրանտայի եւ Զուիցերիոյ մէջ ալ շատ մը հիացողներու խումբեր ունի, խորհելով թէ օր մը մեր շրջանակներու մէջ ալ պիտի թափանցէ, եւ արդէն հայ կրօնական թերթի մը մէջ ալ տեղ գտաւ, եւ իր գրականութիւնն ալ յանձնարարուեցաւ, ուղեցինք «Բանբեր» ընտանիքին ծանօթացնել, թարգմանելով միայն կտոր մը (Տես Մարտի թիւը) ֆրանսական կրօնական թերթէ մը, մեր գիտողութիւնները յառաջիկային վերապահելով:

Երբ կը կարգանք այս ուղղութեան ջատագովներու խօսքերը, յիշուի կը փորձուինք ըսելու թէ ստիկո շատ մը հոգեւորներու փափաքած համաշխարհային վերջին ժամանակի արթնութիւնն է որ սկսած է: Բայց մենք այնպէս կը տեսնենք թէ, հակառակ կարգ մը բարի արգիւնքներու, որոնք միշտ ժամանակաւոր եւ շատ մակերեսային կ'ըլլան, զգուշաւոր ըլլալու ենք կոչելու զանոնք «Ա. դարու քրիստոնէական եղբայրակցութիւն»:
Եղբայրութիւն կամ եղբայրակցութիւն բառը ներկայիս մեծ քաջողական զօրութիւն ունի, բայց անոր նշանակութիւնը ընդարձակ է, ինչպէս որ անոր ներքին արժէքին մէջ կը կայանայ: Մեր գաղափարը այս է թէ Պրովէնիզմը—Օթթոմոսի խմբական շարժումը, չունի իր մէջ այդ ներքին արժէքը եւ կրնայ վստասկար ըլլալ անկեղծ փրկաւորներու համար:

Անոնց սկզբունքները Ս. Գիրքէն առնուած են, իրենց արտայայտութիւնները Խաչ. Բրիտոսի կատարեալ մոնախարութիւնը, Աստուծոյ Որդի քաղցր եւ գաւառի բաւեր են, բայց արգիւնքներուն եւ ռըսըւտականներուն նման անոնց բերնին մէջ ալ ապոկալիս բառեր բուրրովին տարբեր նշանակութիւն ունին քան որ մենք կը տեսնենք Աստուծոյ խօսքին մէջ: Կը խորհինք թէ զանոնք դատած չենք ըլլար թէ որ ըսենք թէ Պրովէնիզմը արգիւնքներուն ձեռքին մէջ միջոց մըն է փոշի ցանելու հաւատացեալներու աչքին, ցոյց տալու թէ Տէրը իրենց միջոցաւ ալ կը գործէ. բայց Տէրը չիտար իր իրենց պըտուէն պիտի ճանչնանք զանոնք: Ժամանակները որքան աւելի կը հասունանան, կրօնական ուղղութիւններ, արթնութիւններ այնքան աւելի կը բազմանան, անկեղծ փրկաւորները երբանցեւաւ եւ զանոնք նշանակեալն շեղեցնելու: Աստուծան ներկայիս աւելի դիւրաւ լուստուր հըրեշտակի կերպարանքին մէջ կը մտնէ:

Մեր տեղեկագրին մէջ յիշուած էր թէ շատ մը աստուածաբանական ուսուցիչներու, քաղցիչներու նոյնիսկ եպիսկոպոսներու եւ բարձրաստիճան եկեղեցականներու համակրութիւնը կը վայելէ Պրովէնիզմը: Ափսոս որ այդպէս է. բայց երբեք զարմանալի չէ. քանզի ներկայ ժամանակին մէջ այդ նուիրական պաշտօնները շատերու համար միայն նախասիրութիւն մ'ըն է. աղպակները ո'չ գիտութիւն իւր ո'չ իմաստութիւն ունին բարին ու չարը զանազանելու եւ ո'չ ալ ունին Հոգիին հեղինակութիւնը տնմիջապէս իրենց վճիռը տալու այս կամ այն ուղանքին մտօնին: Հոգին է կենդանի ընտել:

Յ. Ն. Դ.

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp, Y. ARMEN & Cie, 39, Rue St.-Savournin - Marseille

ՀԱՅ ԱՌԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Ֆարանսիցի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Վազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 8. 15 ին կիրակնօրեայ դաս,
11, Rue de l'Eclipse.

13 ին քարոզածողով,
13 Rue Delille.

15 ին աղօթածողով,
11, Rue de l'Eclipse.

9. 30 ին կիրակնօրեայ դպրոց
մանկանց 11 Rue de l'Eclipse

Շարանամիջի ժողովներ Սէն Լուի, Կարտանի,
Սէն ժիւլիէնի, Սէն Սանտի, Սէն Մարկի-
թի, Սէն ժէրոմի Պուվար Օտօի մէջ):

Սէն Լուի.—Քարոզիչ Պրն. Վահան Սահակեան,
28, Bd. Grands Pins, St. Loup

Կիր. ժամը 8 ին մանկանց կիր. դաս:
9. 30 ին Ս. գրական ուսումնա.

16 ին քարոզածողով:

Սէն Մարկի-թի.—

Կիր. ժամը 16 ին աղօթածողով:

ԼԱ ՍԵՅՆԱ.—Քարոզիչ' Պրն. Ս. Պագալեան,
14 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԷՍ—Հովիւ' Պատ. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

Սէն Փիէր.—

Կիր. ժամը 10 ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով:

ՄՅՆԹԷՆԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13 ին մանկանց կիր. դպրոց:
14 ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.—

Կիր. ժամը 13 ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ:

ՌՅՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

.....

ԼԻՅՆ—Հովիւ' Պատ. Ժ. Պարսափեան,
18 Rue du Dr. Rebatel.

Կիր. ժամը 9. 45 ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Poste.

11 ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւնը:
ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45 ին քարոզածողով,
15 ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10 ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15 ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՅՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

.....

ՍԷՆԹ ԷՔԻԷՆ—Քարոզիչ Պրն. Ի. Արթամեան
2. Place de la Pareille.

Կիր. ժամը 10. 30 ին քարոզածողով
57 Rue de la République.

17 ին աղօթածողով

Արմէ տի. Սալիւի սրահին մէջ:

ՍԷՆ ՇԱՄՅՆ.—

Կիր. ժամը 14 ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը.

.....

ԲԱՐԻՋ—Հովիւ' Պատ. Զ. Բ. Պոտաքեան,
13 Bd. du Lycée Vanves (Seine).

Կիր. ժամը 10 15 ին քարոզածողով
135 Bd. de Sebastopol Paris 2^e

Metro Réaumur - St. Denis

Կիր. ժամը 15. 30 ին

37 Rue Tournesfort Paris 5^e
Metro Mouhe Aut. K.

Ամառն Ա. կիրակիները երիտասարդաց
Քրիստոնէական Միութիւն

բանականութիւնը եւ ուսումնասիրութիւնը:

Ամառն Գ. կիրակիները երիտասար.

դոհեաց Քրիստոնէական Միութիւն

բանականութիւնը եւ ուսումնասիրութիւնը:

Ամառն Բ. եւ Գ. կիրակիները Սր. Դրոց

մեկնութիւն եւ դասաւանդութիւն բոլորին համար

Կիր. ժամը 20. 30 ին աղօթածողով

59 Ave. du Bas Meudon Ile St Germain
Issy les Moulineaux.

ԱԼՅՕՐՎԻԼ.—Հովիւ' Վեր. Մ. Տէր Սահակեան,
16 Bd. Carnot, Alfortville

Կիր. ժամը 15. 30 ին պաշտամունք
Rue des Brochets, Alfortville.

ԲԱՆԲԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ.—

Ուրախ ենք որ մեր խմբագրական շարքը՝ «Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիները» լաւ ընդունելութիւն գտած է ընթերցողներու շրջանակին մէջ եւ ոմանք սկսած են հասցէ տալ կամ ձրի «Բանբեր» խնդրել: Ուրիշներ ալ մէկ տարուան բաժնեզին ղրկած են այդպիսի պարագայի մը «Բանբեր» յուղարկելու: Խմբագրութիւնս կը փափաքի այս դիմումները անպատասխանի չթողուլ. այսու ամենայնիւ մեր բեռը ծանր է եւ հազիւ կրնանք մեր ծախքերը գոցել «Բանբեր»ի այսքան ցած բաժնեզինովը: Սակայն եղած դիմումներն ալ մերժել յիրաւի անգթութիւն պիտի ըլլար, ուստի հարկ սեպեցինք այսպիսի եղբայրական օգնութեան համար միշտ արթուն եղող Բանբերի սիրելի ընտանիքին դիմել որպէսզի միասին մեր լուծանքը միացնելով այդպիսիներու օգնենք: Միտադիր ենք մեզի դիմողներէն հարիւր հատի գոհացում տալ: Ո՞վ կ'ուզէ այս կէտին մէջ մեզի ձեռնտու ըլլալ: Ո՞վ կ'ուզէ օգնել հոգեւոր բաները կարգալու բազմանքով լեցուն հեռաբնակ հայրենակիցներու:

ԲԱՆԲԵՐ ԿԸ ՂՐԿԵՆ.—

Վերոյիշեալ նպատակին համար Բանբեր նուիրողները կը նշանակենք, եւ բաց կը պահինք այս ցանկը մինչեւ ա. ռաջադրուած 100 օրինակը լմնայ:

Յը. Արշալոյս Ամանածեան 1 օրինակ հայերէն (հիմ):

Ոմն 5 օրինակ հայ. թուրք (Մարսէլ):

Ա. Ղ. 1 օրինակ հայերէն (Մարսէլ):

Պատ. Ա. Ս. փափագեանի միջոցաւ 7 օրինակ հայերէն (ֆօն տ'օպէնաս):